ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

ՀԱԿԱՄԱՐՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

www.idem-institute.org
fnfsc.fnst.org
FNFSC

ՊԱՆԴԵԼ ՊԱՆ

ՈՒԼՐԻԿԵ ՖԻՇԵՐ-ԲՈՒՏՄԱԼՈՒԻ
ՀԱՄԱՂԵԿԻՆԱԿՈՒԹՅԱՄԲ

ՀԱԿԱՄԱՐՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՖՐԻԴՐԻԽ ՆԱՈՒՄԱՆԻ «ՀԱՆՈՒՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Friedrich Naumann STIFTUNG FÜR DIE FREIHEIT

Freiheit.org
fnfsc.fnst.org

ISBN 978-9941-27-681-1

© Friedrich Naumann Stiftung für die Freiheit

ՑԱՆԿ

Հակամարտազգայուն լրագրություն. ներածություն 11

Գիտելիքներ և հմտություններ 13

Ի՞նչ է հակամարտություն 13

Ո՞րն է հակամարտության ծագման պատճառը 16

Հակամարտություն և բռնություն. ո՞րն է տարբերությունը 22

Ի՞նչ է նշանակում հակամարտազգայուն 25

Հակամարտության վերլուծություն՝ լրագրողների համար 25

Հակամարտության էսկալացիայի փուլերը 29

Լրագրողների դերը հակամարտության
կարգավորման և խաղաղության հաստատման գործում 34

Լրատվամիջոցների դերը հակամարտության մեջ 35

Խաղաղարար ժուռնալիստիկայի հայեցակարգ 39

Խաղաղարարության ցանկն ու հակամարտազգայուն
ժուռնալիստիկան 44

Հակամարտազգայուն ժուռնալիստիկայի օրինակներ 48

Անվտանգության նորմեր 54

Մատենագիտություն 56

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամը աշխարհի 60-ից ավելի երկրներում պաշտպանում է ազատական այն արժեքները, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, բաց հասարակությունը, կրթությունը, սոցիալական շուկայական էկոնոմիկան, պատասխանատվությունը և անհատական ազատությունը:

Այս գործունեության շրջանակներում 2016 թվականին Ֆրիդրիխ Նաումանը Գերմանիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ ժողովրդավարական, լրատվամիջոցների և մշակութային հաղորդակցության ինստիտուտի և տեղական գործընկերների հետ համագործակցությամբ մեկնարկեց երեքամյա կրթական ծրագիր՝ Հարավային Կովկասի երկրների լրագրողների համար:

Տասնհինգ հոգուց բաղկացած երեք խմբերում Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից ժամանած տարբեր տարիքի և մասնագիտական փորձ ունեցող լրագրողներ մասնակցեցին բարձրորակ դասընթացների և ստացան գործնական փորձ՝ էկոնոմիկայի, մշակութային արժեքների և հակամարտությունների թեմաների շուրջ օբյեկտիվ լրագրողական գործունեության վերաբերյալ:

Այս կրթական ծրագրի նպատակն է նպաստել անաչառ ժուռնալիստիկայի զարգացմանը և կապեր հաստատել տարածաշրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչների միջև:

Հարավկովկասյան տարածաշրջանի լրագրողների և միջազգային ու տեղական փորձագետների այս տեսական ու գործնական համագործակցության արդյունքում, պատրաստվեց երեք ձեռնարկ՝ օբյեկտիվ ժուռնալիստիկայի թեմայով, երեք կոնկրետ ոլորտում՝ էկոնոմիկա, մշակութային արժեքներ և հակամարտություններ:

Պետեր-Անդրեաս Բոխման

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ

Հարավային Կովկասի նախագծի ղեկավար

Հեղինակի մասին

Դոկտոր Պանդել Պանը արդեն 25 տարի աշխատում է որպես լրագրող, խորհրդատու և դասընթացներ վարում: Նա լրագրողների համար պատրաստել և անցկացրել է մի շարք վերապատրաստման դասընթացներ՝ Ուկրաինայում, Բալկաններում, ԱՊՀ և Կենտրոնական Ասիայի երկրներում: Որպես խորհրդատու նա մեծ մասամբ զբաղվում է պետական ռադիոհեռարձակումը հանրային ռադիոյի փոխակերպելու (Արևելյան Եվրոպա, Ուկրաինա) և սակրեբուլոների ռադիո (Community Radios) ստեղծելու (Հարավ-արևելյան Եվրոպա, Մյանմա) պրոբլեմատիկայով: Հրավիրված ուսուցչի կարգավիճակում գործունեություն է վարել Բեռլինի Ազատ համալսարանում, Բոննի և Յենայի համալսարաններում, ինչպես նաև Տիրանայի համալսարանում, Կիրիլի և Մեթոդիոսի անվան համալսարաններում (Բուլղարիա) և Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանում:

Համահեղինակի մասին

Դոկտոր Ուլրիկե Ֆիշեր – Բուտմալոյուն լրագրող է, դասընթացների վարող և դոցենտ: Բեռլինի Ազատ համալսաարանում լրագրողների միջազգային կոլեգիայում ղեկավարում էր վերապատրաստման դասընթացներ, որտեղ մասնակցում էին լրագրողներ Եվրոպայի բոլոր երկրներից, ԱՊՀ-ից և ԱՄՆ-ից: Դասընթացներ և դասախոսություն-սեմինարներ անցկացնելու նպատակով հրավիրված էր Եգիպտոս, Պաղեստին, Գանա, Կամբոջա, Կենտրոնական Ասիա, Բալկաններ և Կովկասյան երկրներ: Անցկացնում էր մեդիա մշակույթի (Media Literacy), քաղաքական հաղորդակցության, լրագրողական պրակտիկայի դասընթացներ: Նրա դոկտորական աշխատանքի թեման է՝ Ռուսական լրատվամիջոցները ճգնաժամային իրավիճակներում:

Ազատ և անկախ լրատվամիջոցները կարևոր դեր են կատարում երկրում ժողովրդավարական մշակույթը պահպանելու գործում: Նպաստում են հասարակական կարծիքի ձևավորմանը, և այդպիսով ծառայում կենտրոնական հանրային խնդրի կարգավորմանը: Լրագրողներին առանձնահատուկ արտոնություններ և հետազոտության հնարավորություններ է տրվում այս գործառույթը ըստ արժանվույն կատարելու համար: Միաժամանակ այս հանգամանքը լուրջ պատասխանատվության է ենթարկում նրանց լսարանի և, ընդհանրապես հանրության առաջ: Դա պատասխանատվություն է ոչ միայն ռեպորտաժի ընթացքում զգուշություն ցուցաբերելու առումով, երբ գործը հատկապես նուրբ թեմաներին է վերաբերում, օրինակ, հակամարտության կամ կապիտալի, շուկաների և ֆինանսական ապրանքների մասին տեղեկատվությունը, այլ նաև այն անհրաժեշտության, որ լրագրողները պարբերաբար շարունակեն բարձարացնել իրենց մասնագիտական որակը:

Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում սովորական լրագրողական կրթությունը ուղղված է դեպի ընդհանուր ուղղություն ունեցող այն լրագրողների դաստիարակում, ովքեր գրում են «ամեն ինչի» մասին: Մասնագիտական վերապատրաստման լայն սպեկտրը տարբեր թեմաների շուրջ գրելու հնարավորություն է տալիս, սակայն քանի որ նրանց կրթությունը, նախևառաջ, օրվա ակտուալ թեմաները մշակելու և խորության փոխարեն, ընդլայնելու վրա է հաշվարկված, այդ պատճառով էլ նրանց մասնագիտական շրջանակները սահմանում է հենց իրենց ընդհանուր կրթությունը, իսկ նոր թեմաներ ուսումնասիրելու և գիտելիքները խորացնելու համար ժամանակ չի մնում: Նույն խնդրի առջև են կանգնում նաև հակամարտությունների, ճգնաժամերի և աղետների մասին ռեպորտաժ պատրաստելու ժամանակ:

Ֆինանսների և բիզնեսի մասին ռեպորտաժի, հասարակության մեջ «տարբերակվածության»/«բազմազանությանն» (“Diversity”) ուղղված, ինչպես նաև հակամարտությունների նկատմամբ ժուռնալիստիկայի նուրբ թեմաներով անցկացված դասընթացներով Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամը արձագանքում է, ոչ միայն Հարավկովկասյան երկրներում այդ թեմաների հետ կապված ստեղծված պահանջարկի, այլ նաև ընդհանրապես աշխարհում լրագրողների հանդեպ պահանջների աճին, քանի որ լրագրողներից օրըստօրե ավելի շատ պրոֆեսիոնալ և սոցիալական հմտություններ են պահանջվում:

Ինչպե՞ս պետք է գրեն ֆինանսական թեմաների շուրջ լրագրողները, որպեսզի իրենց ռեպորտաժը լինի հետաքրքիր, աշխույժ և ընթերցողի համար հասկանալի: Ինչպե՞ս հայթայթեն տեղեկատվություն ֆինանսական և բիզնես կազմակերպությունների մասին: Ինչպե՞ս պահպանեն օբյեկտիվություն ճգնաժամերի, հակամարտությունների և պատերազմների մասին գրելիս: Ի՞նչ չափորոշիչներով է չափվում լրագրողական որակավորումը ճգնաժամային իրավիճակներում: Որքանո՞վ մեծ ազդեցություն են գործում կարծրատիպերը և նախապաշարմունքները տվյալ երկրի լրատվամիջոցների վրա: Ինչպիսի՞ն պետք է լինի խտրականություն չպարունակող ռեպորտաժը՝ ահա այն որոշ հարցերն ու թեմաները որոնք քննարկվել են վորքշոփերի ընթացքում: Տեսական գիտելիքները լրացվեցին գործնական լրագրողական աշխատանքով: Վորքշոփի շրջանակներում մասնակիցները բաժանվեցին երեք խմբի և աշխատեցին համատեղ ծրագրի շուրջ՝ վարեցին հարցազրույցներ և հարցումներ, ստացած տեղեկատվությունը խորացրեցին և առանձնացրեցին շեշտադրումները: Այնուհետև տեղի ունեցավ պատրաստած ծրագրերի ընդհանուր քննարկում և մասնակիցներին տրվեց իրենց աշխատանքները ներկայացնելու, իսկ առաջին հերթին, լրագրողական էթիկայի հիմնախնդիրները քննարկելու հնարավորություն:

Միջազգային խմբերում աշխատելիս մասնակիցներին հնարավորություն տրվեց քննարկել խաչվող թեմաներ և ընդլայնել մա-

սնագիտական արեալը, սրա հետ մեկտեղ ամրապնդել այնպիսի կապեր, որոնք կօգնեն հետագա աշխատանքում: Լրացուցիչ իրավասությունների զարգացմամբ վորքշոփերի մասնակիցներին տրվում է նոր պրոֆիլներ ձեռք բերելու հնարավորություն, ինչը նրանց համար նաև սեփական շուկայական գնի բարձրացման միջոց է: Մասնակիցների հետաքրքրությունները, աշխույժ բանավեճերը, որոնք անցկացվել են վորքշոփերի ընթացքում և դրանից հետո, ինչպես նաև համատեղ ծրագրերը ակներև են դարձնում, թե որքան կարևոր են վերապատրաստման նմանատիպ միջոցառումները լրագրողական պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու համար:

Եվ վերջում, այն ինչ ոչ պակաս կարևոր է. Միմյանց հանդիպելու, իրար լավ ճանաչելու և համատեղ աշխատանքի հնարավորությունը, տարբեր ազգերի ներկայացուցիչ լրագրողներին ազատեց բազմաթիվ նախապաշարմունքներից և կարծրատիպերից: Բոլոր մասնակիցները հուսով են, որ ապագայում իրենց ռեպորտաժներով կկարողանան ոչ միայն ավելի լավ տեղեկացնել իրենց լսարանին, այլ նաև կնպաստեն մարդկանց միջև փախըմբռնմանը:

Պանդել Պան
Նոյեմբեր, 2017

ՀԱԿԱՄԱՐՏԱՁԳԱՅՈՒՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սենսացիոն լուրերի, անսպասելի նորությունների, օպերատիվ փորձաքննությունների, միջոցառումների և իրադարձությունների լուսաբանումը ուղիղ եթերում... Զանգվածային հաղորդակցության ոլորտում զանգվածների հետ հարաբերությունների մեթոդները փոփոխված են: Ռադիո, հեռուստատեսությունը, թերթերը միլիոնավոր մարդկանց միաժամանակ տեղեկություններ տրամադրելու հնարավորություն են ընձեռում: Տեխնիկական առաջընթացին զուգընթաց, տեղեկատվական միջոցների ազդեցությունը հանրության վրա աճում է երկրաչափական պրոգրեսիայով: Համացանցով արագ հաղորդակցումը հնարավոր է ամեն տեղ՝ անկախ գտնվելու վայրից: Մենք ապրում ենք այն դարաշրջանում, ուր լրատվամիջոցները և սառավել են ներխուժել հասարակական կյանք: Առավոտյան սուրճի կամ թեյի գավաթն ըմպելիս կարդում ենք օնլայն հոդվածներ, ավտոբուս սպասելիս՝ ստուգում սոցիալական ցանցում կամ բջջային հեռախոս ստացվող հաղորդագրությունները, ուսումնասիրում ենք «թվիթերը», երեկոյան դիտում ենք հեռուստացույց: Աշխարհում ընթացող լուրերը մատուցվում են անընդմեջ:

ԶԼՄ-ները սոցիալական փոխհարաբերությունների միջոց են: Նրանք մեզանից յուրաքանչյուրին զիջում է ամբիոնը՝ սոցիալական կամ քաղաքական հարցերի շուրջ մեր տեսակետները արտահայտելու և միմյանց հետ տեղեկատվությունը կիսելու նպատակով: ԶԼՄ-ները հետևում են ամեն ինչին և այնուհետև հաղորդում լուրերը, այսինքն

ԶԼՄ-ները իրականացնում են սոցիալական վերահսկողություն: Սա նրանց դրական կողմն է:

Եվ սակայն, չնայած նրա, որ ԶԼՄ-ները անմիջական ազդեցություն են գործում սովորական մարդու մտածելակերպի վրա, նրանց հատուկ է նաև մանիպուլյացիայի (ձեռնածության) ունակությունը, որը համարվում է նրանց բացասական կողմը: «Զանգվածային հաղորդակցության» հեղինակ Ջոզեֆ Կլապերն ասում է, որ այն ինչ անում են լրատվամիջոցները ոչ այլ ինչ է, քան ոչ «համաձայնության ինժեներինգ»:

Լրատվամիջոցների բացասական կողմն ավելի լավ է երևում, երբ հասարակության մեջ հասունանում է հակամարտությունը: Այն երկրներում, ուր հակամարտություններ են ընթանում և մարդկանց անվտանգությունը պաշտպանված չէ, լրագրողները մեծ բարդությունների առաջ են կանգնում: Հակամարտող կողմերը փորձում են վերահսկել լրատվամիջոցներին: Գրաքննության պատճառով տեղեկատվությունը կորցնում է վստահելիությունը: Հաճախ են դեպքերը, երբ լսարանը հակամարտությունների և հարևանությամբ ընթացող իրադարձությունների մասին տեղեկատվությունը ստանում է միայն լրագրողի պատրաստած այուժեից: Այնպես, որ լրագրողի կողմից հակամարտության փափեթավորումը պայմանավորում է լսարանի համակրաբքի ձևավորում՝ հոգուտ որևէ կուսակցության: Դա ուժեղացնում կամ ընդհակառակը, չեզոքացնում է հակամարտությունը: Թույլ կողմերից է նաև այն, որ լրագրողների մեծ մասը տեղեկատվություն է հաղորդում միայն ընթացող հակամարտության մասին, առանց ջանալու կանխել հակամարտությունն ու կարգավորման ուղիներ փնտրել:

Այնուամենայնիվ, հատկապես բռնությամբ հակամարտության դեպքում, լրագրողները պետք է լսարանն ապահովեն հուսալի և անկողմնակալ տեղեկատվությամբ, որպեսզի բռնությամբ ընթացող հակամարտության վերաբերյալ հանրությունը ճիշտ տեղեկություններ ստանա: Այդ ճանապարհով լրագրողները պետք է ներդնեն իրենց ավանդը հակամարտությունների կարգավորման գործում: Լրագրողը

պետք է արհեստավարժորեն և հավուր պատշաճի գիտակցի հակամարտությունների ժամանակ իր դերը և հանրությանն առանց սադրանքների ինֆորմացիա հաղորդելու պատասխանատվությունը և հակամարտող կողմերին օգնի հակամարտության կարգավորման ուղիներ փնտրելու գործում:

Դա կոչվում է հակամարտության նկատմամբ զգայուն ժուռնալիստիկա, այսինքն հակամարտազգայուն լրագրություն:

Լրագրողի առանձնահատուկ դերը կայանում է հակամարտության ծագման, զարգացման և ավարտի պատճառների խորը վերլուծության մեջ: Լրագրողը անպայման պետք է ունենա նորություններ հայթայթելու, մշակելու և ներկայացնելու առանձնահատուկ ունակություն, հակամարտության և որոշումների մասին տեղեկատվություն հաղորդելիս, նա պետք է նախատեսի հակամարտության զգայունությունը:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրենց գործունեության ժամանակ լրագրողները հաճախ հայտնվում են հակամարտության գոտում և երբեմն, ոչ էլ իմանում են այդ մասին: Մեզանից շատերը հակամարտությունը նույնացնում են զինված առճակատման հետ: Թեև հակամարտություն կարող է առաջանալ հասարակության մեջ ընթացող բոլոր տեսակի փոփոխություններից, քանի որ փոփոխությունների պատճառով հաճախակի են անհամաձայնությունները: Այդ պատճառով լրագրողը պետք է լավ ընկալի հակամարտության ծագման պատճառները և հաղթահարման ուղիները:

ԻՆՉ Է ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հակամարտությունը երկկարծիք հայեցակարգ է, որը տարբեր խմբերում ու տարբեր համատեքստերում տարբեր նշանակություն

է ստանում: Հակամարտությունը ընկալվում է որպես բացասական ֆենոմեն և ասոցացվում բռնության հետ, սակայն բռնությունն ու հակամարտությունը հոմանիշներ չեն: Բռնությունը հակամարտության դրսևորումն է, այստեղից ելնելով, սոցիոլոգները հակամարտության նշանակությունը հասկանալու համար ավելի լայն ու դրական մոտեցում են ընտրում: Այս մոտեցման համաձայն, հակամարտությունը ընկալվում է որպես բնական տարածաչափական ֆենոմեն, որը, որպես օրենք հանրության ներսում ընթացող փոփոխության ցուցանիշն է: Այնպես, որ հակամարտությունը համարվում է նորմալ երևույթ և, երբ հասարակության շրջանում տեղի են ունենում փոփոխություններ, մնում է որպես սոցիալական ու քաղաքական կյանքի օրինական մաս: Հանրությունը զգուշանում է, հակամարտության բռնության վերածումից:

Հակամարտություն տեղի է ունենում, երբ երկու կամ ավելի կողմեր (անհատ կամ խումբ) գտնում են, որ իրենց շահերը, նպատակները կամ պատվախնդրությունները անհամատեղելի են, արտահայտում են թշնամական վերաբերմունք և իրենց արարքով խանգարում մյուս կողմերի շահերին: Եթե ներգրավված կողմերը անհամաձայնությունն ու հակամարտությունը խաղաղ և կառուցողական են կառավարում, ապա հակամարտությունն ընդունում են որպես դրական գործընթաց: Եթե հակամարտությունն ընթանում է առանց դեստրուկտիվ ուժի կիրառման, այն համարվում է սոցիալական կյանքի բաղկացուցիչ տարր և նպաստում հասարակության դրական զարգացմանը:

Թեպետ, երբ կողմերը չեն փորձում խաղաղությամբ հասնել իրենց նպատակներին և դիմում են ուժի, հակամարտությունը ձեռք է բերում բռնության բնույթ: Այստեղից ելնելով, հակամարտությունների կանխարգելումը ոչ թե հակամարտություններից, այլ բռնի էսկալացիայից խույս տալն է:

Բռնի հակամարտությունները անխուսափելի գործընթաց չեն և չեն զարգանում մեկ գիշերվա մեջ: Հակամարտությունը դինամիկ գործընթաց է, որը տարբեր ձևեր է ընդունում և էսկալացիայի ու դեէսկալացիայի տարբեր փուլեր է անցնում, որը պայմանավորված

է բարդ համակցություններով և հակամարտության պատճառը թաքցնելով: Հակամարտությունը այնքան ժամանակ է մնում լատենտ վիճակում, մինչև կողմերից մեկը չի անում առաջին քայլերը, ինչը փոխում է ստատուս-քվոն: Հաճախ կողմերը այնքան ժամանակ չգիտեն ակնկալվող հակամարտության մասին, մինչև տեղի է ունենում այնպիսի մի բան, որը հանրությանը հայտնում է հիմնախնդրի առկայության մասին: Օրինակ. համայնքները կարող են բարեդրացիորեն ապրել կողք-կողքի և օգտվել ընդհանուր արոտավայրերից, մինչև այդ հողի վրա կհայտնաբերեն հանքային ռեսուրսներ, որը հետզհետե կհանգեցնի լարվածության աճմանը:

Հակամարտություն կարող է առաջանել տարբեր սոցիալական պատճառներից ելնելով: Դրանք կորող են լինել ընտանեկան (ծնող, ամուսնություն, քույր-եղբայրներ, երեխաների խնամակալություն, ընտանեկան բռնություն), շրջաններում մունիցիպալային, քաղաքական կուսակցությունների միջև (հարցերի, ծրագրերի և մանիֆեստների պատճառով), խմբերի միջև երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

Այսպիսով, հակամարտություններ առաջանում են հարաբերություն-ների ժամանակ և ակնհայտ է, որ այդ հարաբերությունների բնույթը կարևոր ազդեցություն է գործում հակամարտության տեսակի ձևավորման վրա: Եթե կողմերն ունեն երկարատև անտագոնիստական և թշնամական պատմություն, առանց հակադրության երկուստեք բավարար արդյունքներին հասնելու հեռանկարները նվազում են: Եթե կողմերն ունեն վիճահարույց հարցերը կոնստրուկտիվ կերպով լուծելու պատմություն, ապա աճում է հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու հնարավորությունը աճում է: Կողմերի հավատն ու տեսակետները կարևոր դեր են կատարում հակամարտության ընթացքում:

Այն փաստը, որ կողմը որևէ բան ճշմարիտ է համարում, նույնչափ կարևոր է, որքան իսկապես արդարացի է այդ հավատքը թե ոչ: Օրինակ՝ երբ խմբերից մեկը «տոհմական հողի» նկատմամբ հավակնություն է հայտնում, իսկ երկրորդը չի ընդունում այդ հավակնությունը, հակամարտությունը հավանական են դառնում:

Հակամարտությունը անխուսափելի է, երբ կողմերը նպատակաուղղված իրականացնում են իրենց համար մատչելի իշխանության մոբիլիզացում: Դա կարող է լինել կառավարությունների կողմից զինված ուժերի և խռովարարների օգտագործումը, գործադուլը, արհմիությունների ու կորպորացիաների արգելափակումը, բանտարկյալների հացադուլը և մարգինալացված քաղաքացիների ցույցերը: Ինչպես նաև հնարավոր է, որ կողմերը ներդնեն ֆինանսական միջոցներ և հասարակական կարծիքը փոխելու նպատակով, գնեն գովազդ: Ռազմավարությամբ կիրառեն սոցիալական ցանցերը և լրատվամիջոցները, դիմելով կոլեկտիվ գործողությունների (սպառողների բոյկոտ, նստացույց)՝ վաստակեն աջակցություն: Եթե հակամարտության մասին տեղեկատվությունը հաղորդելիս լրագրողները ցանկանում են փոխել իրավիճակը, նրանք խորապես պետք է ըմբռնեն տվյալ իրականությունը: Ճիշտ է, հակամարտությունները հաճախ տանում են դեպի բռնություն, սակայն ակնհայտ է, որ կոնֆրոնտացիան անհրաժեշտություն չէ: Լրագրողները պետք է հասկանան, որ հակամարտությունն ինքն իր մեջ միայն կոնֆրոնտացիա՝ հաղթողներ և պարտվողներ չի ընդգրկում, հակամարտությունը հնարավոր է ավարտվի խաղաղ, կողմերի համար ընդունելի արդյունքներով: Լրագրողները պետք է նախատեսեն նաև, որ հակամարտությանը մասնակից կողմերը երբեմն չեն գիտակցում, որ էսկալացիան կարող է հասնել այն աստիճանի, որ բոլոր մասնակիցների համար լինի վնասակար և դեստրուկտիվ:

ՈՐՆ Է ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Իհարկե, եթե լրագրողները ցանկանում են կարգավորել հակամարտությունները, նրանք անպայման պետք է ուսումնասիրեն հակամարտության սկզբնապատճառները: Հնարավոր է, որ լրագրողներն այդպես էլ չպարզեն հակամարտության ստույգ պատճառները, սակայն նախատեսելով հակամարտությունն առաջացնող գործոնների վերլուծությունը կարող են կառուցել լավ հիմնավորված հիպոթեզներ:

Հիպոթեզները լրագրողներին օգնում են ճիշտ ձևակերպել հարցերը. Ընձեռում են հակամարտությունն առաջացնող պատճառներն ավելի խորը կերպով ուսումնասիրելու հնարավորություն, ինչը նպաստում է, որպեսզի լրագրողները կատարելապես գիտակցեն ընթացող իրադարձությունները: Կարևոր է ընդունել այն, որ հակամարտությունը կարող է ծագել մի շարք պատճառներից, ինչը բարդացնում է ճիշտ որոշումների կայացումը: Բացթողումներ թույլ չտալու նպատակով լրագրողները պետք է սթափ լինեն:

Չնայած նրա, որ հակամարտությունները հաճախ բնութագրվում են նախատեսելով էթնիկ, կրոնական, մշակութային կամ ազգային տարբերություններով, որոշ փորձագետների կարծիքով, այս տերմինները, որևէ բան չեն բացահայտում: Գոյություն ունի այն կարծիքը, որ մարդկանց տարբերվող էթնիկ և կրոնական ավանդույթները հակամարտության պատճառ չեն դառնում: Հակամարտությունները կարող են ներառել էթնիկ կամ կրոնական հիմնախնդիրներ, սակայն դրանց հիմնական պատճառները պետք է փնտրենք այլ տեղերում: Օրինակ՝ սահմանափակ ռեսուրսներն ու դրանց բաժանումը, կառուցվածքային անհավասարակշռությունը, տեղեկատվության և հաղորդակցության պակասը և այլն: Մարդիկ չեն դրսևորում դաժանություն, միայն այն պատճառով որ միմյանցից տարբերվում են: Զարմանալի չէ, որ իշխանության մեջ գտնվողների համար ավելի հեշտ է մոբիլիզացնել էթնիկ, մշակութային և կրոնական տարբերություններ ունեցող մարդկանց: Աշխարհում լուրջ հակամարտությունների գերակշիռ մասը տեղի է ունենում ճիշտ այնտեղ, որտեղ գոյություն ունի էթնիկ և կրոնական բազմազանություն: Մարդիկ, որոնք կիսում են միմյանց մշակութային և կրոնական արժեքները, ավելի հեշտ են միավորվում, քան նրանք, ովքեր չեն կիսում: Եվ սակայն, այս փաստը չի տալիս հակամարտությունների պատճառների պարզաբանման բավարար հիմք: Հակամարտություններն ունեն մեկ ընդհանուր հատկություն. ծագում են տարբերվող նպատակների պատճառով և ընթանալիս փոխում իրենց ձևն ու էսկալացիայի աստիճանը: Հակամարտության ծագման ամենատարածված գործոններն են.

Սակավ ռեսուրսներ. եթե հասարակությունը կամ ազգը չունեն յուրաքանչյուր քաղաքացուն կյանքի միջին մակարդակով ապահովելու համար բավարար ռեսուրսներ, ապա հակամարտությունն, ամենայն հավանականությամբ, հավանաբար ակնկալելի է: Խմբերն ու անհատները, նման դեպքում, միմյանց հետ պայքարում են սակավ ռեսուրսների համար: Դրանք կարող են լինել նյութական ռեսուրսներ, որպիսին են՝ հողը, ջրի ու բժշկական ծառայության հասանելիությունը, սնունդը, ապաստանը, աշխատատեղերը և անձնական առաջընթացի հնարավորությունները: Հաճախ այսպիսի հակասություն առաջանում է այն պատճառով, որ կողմերը ցանկանում են կիրառել տարբեր ռեսուրսներ: Լրագրողը պետք է նախատեսի, որ հողից օգտվելու պատճառով ծագած հակամարտությունը հաճախ կրում է մշակութային և էթնիկ հակամարտության բնույթ:

Ռեսուրսների հետ կապված հակամարտությունները կարող են առավել սրվել, երբ տեղի է ունենում ռեսուրսների անհավասար բաժանում: Այդ պատճառով, երբ խմբերը գտնում են, որ արդարացիորեն չեն ստանում հասարակական բարիքի իրենց մասը, հակամարտությունն անխուսափելի է:

Իշխանության անհավասար բաժանումն ու կառուցվածքային անհավասարակշռություն. հաճախ հակամարտություն է ծագում այն ժամանակ, երբ ռեսուրսների վերահսկողությունն ու բաժանումը տեղի է ունենում անարդար, կամ անարդար է ընկալվում խմբերի կողմից: Մեծ մասամբ այդ հակամարտությունները կապված են անցյալում գոյություն ունեցող չկարգավորված հիմնախնդիրների հետ: Պատմական հանգամանքների պատճառով, հնարավոր է դոմինանտ էթնիկ կամ կրոնական խումբը իշխանությունն օգտագործի արտոնյալ դիրք գրավելու համար, այնուհետև իր դիրքորոշումը կիրառի ռեսուրսներն անհավասար բաժանելու և ուրիշների հաշվին օգուտ շահելու համար: Նման կառուցվածքային անհավասարակշռությունը հաճախ ստեղծվում է այն պատճառով, որ ժամանակակից պետությունները կառուցելիս էթնիկական ինքնությունը ենթարկվում է մանիպուլյացիայի կամ անտեսվում է: Հակամարտությունների

հավանականություն կա նաև այն պետություններում, ուր ապրում են տարբեր փոքրամասնություններ և պետությունը չի բավարարում այդ փոքրամասնությունների պահանջները: Հիմնախնդիրներ կարող են ծագել, օրինակ, երբ փոքրամասնությունների խումբը գտնում է, որ իրենց վզին են փաթաթել գերիշխող խմբի լեզուն:

Մարդկային կարիքներ. յուրաքանչյուր մարդ և մարդկանց խմբեր ունեն որոշակի պահանջներ, որոնք պետք է բավարարվեն: Դրանք են ֆիզիկական կարիքները, ինչպիսիք են՝ սնունդը, հագուստն ու ապաստանը, վնասից պաշտպանվելը, ինչպես նաև ինքնության կարիքները, այն մարդկանց հետ ազատ հարաբերությունների անհրաժեշտությունը, որոնք ունեն ընդհանուր գաղափարախոսական, քաղաքական և կրոնական տեսակետներ: Բացահայտորեն, ազատ, առանց սպառնալիքի արտահայտվելու անհրաժեշտությունը: Հաճախ անհատի ինքնությունը կապված է խմբերի հետ: Խմբի կառուցվածքները, տեսակետներն և վերաբերմունքը անհատները համարում են իրենց տարածական «ես»-ի մի մասը: Եթե ինչ-որ բան կամ որևէ մեկը սպառնում է խմբի ինքնությանը, այդ դեպքում խմբի յուրաքանչյուր անդամ այդ վտանգը, որպես անձնական վտանգ է ընկալում: Խմբի ինքնության անհրաժեշտությանը կարող է հետևել լուրջ արդյունք, քանի որ առաջնորդներին տրվում է այն հարցերի շուրջ մարդկանց մոբիլիզացնելու հնարավորություն, որոնք ազդեցություն են գործում խմբի ինքնության վրա:

Նման պահանջների բավարարման ցանկությունն այնքան մեծ է, որ երբ խմբերը ավանդական և սոցիալական ընդունելի քաղաքական գործընթացներով չեն կարողանում բավարարել դրանք, դիմում են վիճահարույց ռազմավարությանը:

Իսկ դա նշանակում է, որ նրանք կարող են խախտել օրենքները, դիմել բռնության և երբեմն նաև կիրառել խիստ մարտավարություն: Այդ կարիքների կարևորագույն բնութագրիչն այն է, որ նրանք առկա են անհատների մոտ, խմբերում ունեն խոր արմատներ և չեն կարող դառնալ բանակցությունների առարկա: Հավանաբար հնարավոր է կարգավորել կարիքները տարբեր կերպ, սակայն անհնար է դրանք

վարկաբեկել: Կարիքների պատճառով ծագած հակամարտությունները կարգավորելու համար, գործընթացներն անհրաժեշտ է վարել այնպես, որպեսզի որոշվի, թե մասնավորապես, ո՞ր կարիքների շուրջ է անհնար հասնել համաձայնության: Հիմնախնդիրը անհնար է կարգավորել առանց կրեատիվ մոտեցումներ ցուցաբերելու:

Տեղեկատվություն և հաղորդակցություն. հակամարտությունները հաճախ ծագում են նաև այն դեպքերում, երբ ներգրավված կողմերը միմյանց մասին ունեն սխալ կարծիքներ և տեսակետներ ու նրանց միջև հաղորդակցությունը սակավ է, կամ ընդհանրապես գոյություն չունի: Հիմնախնդիրները սրվում են, երբ հիմնավորված որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն հայթայթելու հնարավորությունը սահմանափակվում է: Որոշ դեպքերում, հաղորդակցման ցածր ունակության պատճառով, հնարավոր է կողմերը չհասկանան, թե ինչ դրդապատճառներից ելնելով են նրանք դիմում կոնկրետ քայլերի: Հակամարտող կողմերին բնորոշ է, միմյանցից տեղեկատվություն թաքցնելը, այն հույսով, որ դա առավելությունն իրենց կողմ կթեքի: Այդ խնդիրները կարող են ավելի սրվել, քանի որ մարդիկ հակված են խեղաթյուրել տեղեկատվությունը ու հարմարվել հիմնախնդրի հետ կապված արդեն գոյություն ունեցող տեղեկատվության հետ: Դա կարող է ծայրահեղ դժվար լինել նրանց համար, ովքեր ծրագրում են հաշտության քայլեր անել և ցանկանում են, որպեսզի հակառակորդ ճամբարում հասկանան դրա նշանակությունը:

Միջանձնային հարաբերություններ. Խմբերի միջև հակամարտությունները երբեմն ծագում են միջանձնային հակամարտությունների պատճառով, հատկապես, քաղաքական պերսոնալիզացիայի և հիպերպերսոնալիզացիայի ժամանակ: Երբ հասարակության ազդեցիկ անդամների միջև կոնֆլիկտային իրավիճակ է, ընդդիմախոսների մոտ առավելություն ձեռք բերելու նպատակով, նրանք մոբիլիզացնում են իրենց կողմնակիցներին: Նման դեպքում աջակիցները պայքարի մասնակից են դառնում, և քանի որ նրանք առաջնորդների հովանու ներքո են գործում, նրանց նկատմամբ անկեղծ հավատարմություն են ցուցաբերում: Երբ հակամարտությունն այդ ճանապարհով է

զարգանում, ձեռք է բերում իր սեփական դիմանիկան և հաճախ հեռանում առաջնորդի ազդեցության ոլորտից: Այսպիսի հակամարտությունն իր էությամբ բռնություն է պարունակում, որին բնորոշ է գույքի ոչնչացում, ֆիզիկական վնաս և մահացություն:

Անորոշություն. հակամարտությունները հաճախ ծագում են փոփոխությունների, անորոշությունների և փոխակերպումների ժամանակ, երբ ստեղծվում են նոր նորմեր և խմբերը պայքարում են միմյանց և անցյալի հետ փոխազդեցության հիմնախնդրի դեմ: Հետպատերազմական շրջանում անորոշությունը հեշտությամբ կարող է առաջացնել հակամարտություն: Խմբերի միջև եղած տարբերությունները հաճախ քննարկվում են մակրոմակարդակի վրա: Թեպետ, խմբի անդամների միջև ատելությունն ու զզվանքի զգացումը երկար է շարունակվում: Հակամարտություններ կարող են ծագել նաև այն դեպքում, երբ մարտնչողները, որոնք նպատակին հասնելու համար սովոր են դիմել ուժի, հանկարծ հայտնաբերում են, որ պետք է ենթարկվեն քաղաքացիական իրավունքին: Այդ մարդկանց համար ծայրահեղ դժվար է ներգրավվել ժողովրդավարական գործընթացներին, քանզի մտածում են, որ ժողովրդավարությունը չի ծառայում իրենց շահերին: Անորոշ իրավիճակների դեմ պայքարի խնդիրը կտրականապես ակտիվանում է այն երկրներում, որտեղ մարդկանց ձեռքում մեծ է զենքի քանակը և ընթանում է բռնի անցումային գործընթաց:

Նպատակների անհամատեղելիություն. Գոյություն ունեն բազմաթիվ դեպքեր, երբ կողմերի նպատակները անհամատեղելի են, դա հակամարտություն է առաջացնում: Հնարավոր է ներդրողները գետի եզրին հիդրոէլեկտրակայան կառուցելու ցանկություն ունենան, իսկ պահպանողականները՝ գետի պաշտպանության: Պետությունը կարող է ծրագրի լճի քաղցրահամ ջրերում ձկնորսության իրավունքը փոխանցել մեծ ընկերությանը, իսկ հանրությունը՝ պաշտպանի տարածքն ու տեղի ձկնորսներին: Կոնֆլրոնտացիայի պատճառների թվարկացանկը անսահման է, գտնել այնպիսի ելք, որը կբավարարի բոլոր կողմերին, շարունակում է մնալ որպես մարտահրավեր: Հարկավոր է նշել, որ նշանակություն չունի, անհամատեղելի են իսկապես, թե ոչ կողմերի

նպատակները: Այն փաստը, որ կողմերն այդպես են համարում, բավարար պատճառ է հակամարտության ծագման համար:

Հակամարտությունն առաջացնող պատճառները որոշելու ժամանակ լավ օժանդակ միջոց է կատեգորիզացիան: Իրականությունը ցույց է տալիս, որ հակամարտությունները հազվադեպ կամ երբեք չեն ծագում մեկ այլ պատճառով:

Որպես օրենք, չնայած նրա, որ հարցերից մեկը գերիշխող է, մյուս գործոնները ևս նպաստում են հակամարտության բորբոքմանը: Օրինակ, հնարավոր է առաջին հայացքից հակամարտությունն ունենա կառուցվածքային բնույթ, որի դեպքում առանձին էթնիկ խմբեր արտոնյալ լինեն մյուսների համեմատ, սակայն միևնույն ժամանակ, ի հայտ են գալիս մարդկային կարիքներ, քանի որ խտրականության ենթարկված խումբը գտնում է, որ իր ինքնությունը անտեսված է: Հաճախ են լինում նաև դեպքեր, երբ մրցակից քաղաքական խմբակցությունները նպաստում են հակամարտության ծագմանը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ. ՈՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշեցինք, երկու հակամարտող կողմերի միջև եղած հակամարտությունը սխալմամբ որպես բռնություն են համարում: Բռնություն և հակամարտություն բառերը հոմանիշներ չեն: Բռնությունը հակամարտության դրսևորում է և ընդգրկում է մեկ պարտիա (առանձին անձ կամ խումբ), որը երկրորդ կողմին վնասելու նպատակով, որոշակի գործողություններ է իրականացնում:

Լրագրողները հեշտությամբ են նույնականացնում և նկարագրում ակնհայտ բռնություն պարունակող ֆիզիկական հակամարտությունները: Բռնության ժամանակ պարտադիր չէ կիրառել ֆիզիկական ուժ: Գոյություն ունի նաև այլ տեսակի բռնություն, որը մեծ վնաս է հասցնում հասարակությանը, օրինակ՝ փախստականներին սնունդ կամ նյութական այլ ապրանք մատակարարելու դադարեցում: Բռնություն է

համարվում նաև ցանկացած այնպիսի գործողություն, որը խարխլում է մարդկանց ինքնանույնականացումը՝ մարդու իրավունքների չարաշահում կամ քաղաքացիական և քաղաքական իրավունքների սահմանափակում: Այս տեսանկյունից, բանավոր վիրավորանքն ու ատելության լեզուն ևս պետք է համարվեն բռնի գործողություններ, քանի որ հարձակվողների նպատակն է վնաս հասցնել մյուսներին:

Այսպիսով, ակնհայտորեն արտահայտված բռնությունից բացի հասարակության մեջ գոյություն ունեն բազմաթիվ այլ տեսակի բռնություններ: Լրագրողների համար ավելի դժվար է նկատել և բացատրել դրանք: Շատ կարևոր է լուսաբանել թաքնված բռնությունը, քանի որ նմանատիպ բռնությունն ունի ակնհայտ բռնության վերածվելու պոտենցյալ, եթե այն կարգավորելու նպատակով կանխավ չձեռնարկվեն քայլեր: Այսպիսի բռնության օրինակներ են.

Մշակութային բռնություն. առաջանում է նրանով պայմանավորված, թե ինչպես է սոցիալական խմբերից մեկն ընկալում մյուսին: Այն կարող է ներառել խոսելաոճ, լուսանկարներ կամ հայեցակետեր, որոնք սաստկացնում են ֆիզիկական բռնությունը և տարբեր բնույթ են տալիս:

Ատելության լեզու. էթնիկ կամ մշակութային խմբերը միմյանց մասին խոսում են բացահայտ, ատելության լեզվով: Մի խումբը մեղադրում է մյուսին իր առջև ծառացած այն բարդությունների ու հիմնախնդիրների ծագման մեջ, որը նրան անհանգստացնում է: Մեղադրվող խումբը ոչնչացնելու համար հաճախ խրախուսվում է բռնությունը:

– *Քսենոֆոբիա (այլատյացություն).* որևէ երկրի ատելությունը կամ վախը սխալ պատկերացում է ստեղծում այդ երկրի մասին և աջակցում քաղաքականությանը, որն արդյունքում հանգեցնում է այդ երկրի հետ հակամարտության:
– *Առասպելներ և լեգենդներ պատերազմի հերոսների մասին.* հասարակությունը, որի հանրահայտ երգերն ու պատմական գրքերը իդեալականացնում են մի խմբի անցյալ հաղթանակները, ատելություն են հրահրում մյուս խմբում:

– *Պատերազմի կրոնական արդարացումը.* օտարների տեսակետների ծայրահեղ անհանդուրժողականությունը նպաստում է հակամարտության:
– *Գենդերային խտրականություն.* կանանց նկատմամբ այն օրենքների ու պրակտիկայի կիրառումը, որը չի կիրառվում տղամարդկանց նկատմամբ, բռնության տեսակներից մեկն է:

Կառուցվածքային բռնությունը չարիք է: Այն հիմնվում է խմբի կամ հասարակության ավանդական վարքագծի ու օրենքների վրա: Հասարակությունը թույլ է տալիս կամ անտեսում է այդ չարիքը:

– Ինստիտուցիոնալ ռասիզմ կամ սեքսիզմ. օրենքներ և պրակտիկա, որոնք ռասայի կամ սեռի համաձայն տարբերության ու անհավասար վերաբերմունքի հնարավորություն են տալիս:
– Գաղութատիրություն. երկրի ինքնորոշման հնարավորության բացակայություն: Օտար երկրի իշխանությունը ստիպողաբար վերահսկում է կարևոր որոշումներ կայացնելու գործընթացները:
– Ծայրահեղ շահագործում. ստրկություն:
– Աղքատություն. հակամարտության ամենատարածված պատճառն աշխարհում:
– Կոռուպցիա և նեպոտիզմ. կառավարության որոշումների վրա ազդեցություն են գործում կաշառակերությունը, ֆավորիտիզմը, ընտանեկան կամ տոհմական կապերը:
– Կառուցվածքային սեգրեգացիա. օրենքներ, որոնք ստիպում են մարդկանց, իրենց կամքի հակառակ, ապրել առանձին խմբերով:

Այս տեսակի բռնության նույնականացումը չափազանց կարևոր է հակամարտության լուսաբանման և վերլուծության ժամանակ: Հաճախ հենց այս տեսակի բռնությունն է դառնում ֆիզիկական առճակատման իրական պատճառ: Պետք է նախատեսել, որ ֆիզիկական բռնության դադարեցումը բավարար չէ, եթե անտեսված են մշակութային և կառուցվածքային բռնությունները, քանի որ դրանք կարող են կրկնվել:

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏԱԶԳԱՅՈՒՆ

Հակամարտազգայուն նշանակում է.

- Ընկալեք համատեքստը, ինչը նշանակում է հասկանալ ձեր գործողության արեալի ամբողջ սոցիալ-տնտեսական և քաղաքական լարվածությունը, արմատական պատճառների, մշակութային և պատմական հողի և կառուցվածքային գործոնները, քանի որ դրանք ունեն բռնության պոտենցյալ:
- Ընալեք ձեր ինտերվենցիայի (միջամտություն) և համատեքստի փոխգործողությունը:
- Գործեք այս փոխգործողության համաձայն, որպեսզի խուսափեք բացասականից և հասնեք առավելագույնս դրական արդյունքի:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնավորված որոշումներ կայացնելու և հակամարտությունները կարգավորելու համար հակամարտությանը մասնակցող քաղաքացիները պետք է ապահովված լինեն որակյալ ժուռնալիստիկայով: Լրագրողների շրջանում գոյություն ունի ընթացիկ իրադարձությունների և բռնի հակամարտությունների մասին ուղղակի մերկ փաստերը մատուցելու միտում: Դա բավարար չէ, որպեսզի ունկնդրիրը, ընթերցողը կամ հեռուստադիտողը հասկանան թե ինչ է տեղի ունենում իրականում: Եթե լրագրողները միայն պրոֆեսիոնալ հեռուստադիտողներ և լուրեր տարածողներ են, ապա քաղաքացիները հակամարտությունը կըմբռնեն այնպես, ինչպես իրենց կմատուցեն լրագրողները: Սակայն եթե նորությունները փնտրենք մերկ փաստերից դուրս, քաղաքացիներին ավելի շատ տեղեկատվություն և հակամարտությունները կարգավորելու ուղիներ առաջարկենք, ապա քաղաքացիները հակամարտությունը կընկալեն այլ տեսանկյունից: Եթե լրագրողները կողմերին հակամարտության լուծման ուղիներ

առաջարկելու ցանկություն ունեն, նրանք պետք է լավ իմանան, թե ինչպե՞ս է սկսվել հակամարտությունը, ովքե՞ր են հակամարտության մասնակիցները, գոյություն ունի արդյո՞ք հակամարտությունը խաղաղ ճանապարհով ավարտելու հնարավորություն:

Հակամարտությունը լուսաբանելիս լրագրողները պետք է հղեն այնպիսի հարցեր, որոնք մարդկանց կօգնեն հասկանալ, թե ի՞նչ և ինչու՞ է տեղի ունենում: Հակամարտությունները վերլուծելիս լրագրողները կարող են նույնականացնել տեղեկատվության ավելի շատ աղբյուրներ, ինչպես նաև որոշել, թե ինչ են փորձում անել դիվանագետներն ու բանակցողները այս ուղղությամբ:

Հակամարտությունը տարբեր անկյուններից ներկայացնելը և վերլուծելը, նախատեսելը, թե ինչ ազդեցություն է այն գործում մարդկանց վրա և վստահելի տեղեկատվություն հաղորդելը կողմերին օգնում է ավելի լավ ըմբռնել հակամարտությունը: Այսպիսով, հակամարտության վերլուծությունը զգայուն ժուռնալիստիկայի հիմնական բաղկացուցիչ մասն է: Հակամարտությունը հնարավոր է վերլուծել տարբեր մակարդակներով (օրինակ՝ տեղական, տարածաշրջանային, նացիոնալ և այլն): Վերլուծության ընթացքում պետք է որոշվի, գոյություն ունի արդյո՞ք կապ այդ մակարդակների միջև: Կարևոր է նաև շարունակական կապ հաստատել հակամարտության հետ փոխկապակցված այլ համակարգերի հետ:

Հակամարտության բնույթի և բաղկացուցիչ մասերի վերլուծությունը կազմված է չորս հիմնական տարրերից:

1. **Հակամարտության գործոններ.** Ինչպես արդեն նշեցինք, հակամարտությունը հիմնված է բազմաթիվ պատճառների ու գործոնների վրա: Տարբեր տեսակի պտճառներն իրար ծածկում են և փոխկապակցված են: Գոյություն չունի առանձին որևէ գործոն, որը հանգեցնում է հակամարտության: Պատճառներն ու գործոնները կարող են լինել համակարգային (կառուցվածքային), պրոքսիմալ (հնարավորություն ընձեռող), ուղղակի (առաջացնող): Հակամարտության գոտում գործում են ներքին և արտաքին գործոններ:

– *Համակարգային պատճառներ.* կառուցվածքային վիճակը. Համակարգային դետերմինանտները (որոշիչներ) կողմերի նյութական վիճակի օբյեկտիվ փոփոխություններ են առաջացնում: Շրջակա միջավայրի վատթարացումը, բնակչության աճը, ռեսուրսների սակավությունը և մրցակցությունը, գաղութային կամ սառը պատերազմի ժառանգությունը, արժեքների և ավանդույթների ոչնչացումը, աղքատությունը և էթնիկ պատկանելությունը հակամարտության համակարգային պատճառների օրինակներն են: Հակամարտության համակարգային պատճառները լայնորեն տարածված են և վերաբերում են բազմաթիվ մարդկանց: Համակարգային պատճառները դանդաղ են ազդում հակամարտությունների առաջացման միջոցների վրա: Միջազգային ծրագրերը կամ կառավարության քաղաքականությունը, որոնց նպատակն է համակարգային պատճառների շուրջ աշխատելու ճանապարհով խուսափել հակամարտություններից կամ կրճատել դրանք, արդյունքներ են տալիս երկարաժամկետ հեռանկարում:

– *Պրոքսիմալ պատճառներ.* քաղաքական և ենթակառուցվածքային գործոններ: Պրոքսիմալ աղբյուրները սոցիալական, քաղաքական, հաղորդակցական գործընթացների և ինստիտուտների ներսում առկա հիմնախնդիրներն են, որոնք ուժեղացնում են ընդհանուր վիճակի ազդեցությունը մարդկանց կյանքի ու վարքագծի վրա: Պրոքսիմալ գործոնները սահմանում են, թե առաջացնու՞մ են, արդյոք, համակարգային պայմանները բռնի ռեակցիաներ կամ կգտնեն արդյոք հակամարտության մասնակիցները հակամարտությունը կարգավորելու ավելի խաղաղ ուղիներ: Պրոքսիմալ դետերմինանտների և բռնի հակամարտության միջև եղած կապը հեշտ է գտնել: Կառավարության քաղաքականությունը, սոցիալական կազմակերպությունները, տնտեսական բարեփոխումների ծրագրերը, քաղաքական ազատականացման խնդիրները, ռազմականացումը և արտաքին ռազմական օգնությունը կարող են լինել հակամարտության պրոքսիմալ աղբյուրներ:

– *Ուղղակի պատճառներ.* բռնի հակամարտության անմիջական և ուղղակի պատճառները պետք է փնտրենք առանձին հիմնական գործողություններում և իրադարձություններում: Օրինակ՝ իշխանությունը հարձակվում է ճնշվածների խմբի վրա, որը ապստամբություն է ծրագրում: Այս գործոնները ակնհայտ են և դրանց ազդեցությունը հեշտ է որոշել:
– *Արտաքին և ներքին գործոններ.* հակամարտության պատճառի աղբյուրը ևս մեկ կարևոր տարածաչափություն է, որը ազդեցություն է գործում երկրի դիրքերի ամբողջ սպեկտրի վրա՝ հակամարտությունից մինչև հաշտություն: Ներքին և տարածաշրջանային գործոնները, այնպես ինչպես և երրորդ կողմի էգզոգեն գործոնները, նպաստում են լարվածությունը մեղմելու նպատակով բռնի մոտեցումներն արմատախիլ անելուն: Հակամարտության ներքին և արտաքին դետերմինանտները կարող են լինել համակարգային, պրոքսիմալ և ուղղակի:

2. **Հակամարտության մասնակիցներ.** Վերաբերում է բոլոր նրանց, ովքեր ներգրավված են հակամարտությանը կամ տուժել են հակամարտության արդյունքում: Դրանք են՝ հակամարտությանը մասնակցող անձինք, խմբերն և ինստիտուցիաները, որոնց վրա հակամարտությունը դրական կամ բացասական ազդեցություն է ունեցել, ինչպես նաև հակամարտության կարգավորմանը մասնակցող անձինք: Հակամարտության ակնհայտ և թաքնված մասնակիցների նույնականացման ունակությունը կարևոր է հակամարտությունը լուսաբանող լրագրողի համար, քանի որ հակամարտության նույնականացումը օգնում է պարզել հետևյալը՝

– մասնակիցների կողմից ցայտուն հետաքրքրությունները,
– մասնակիցների գաղտնի ծրագրերը,
– մասնակիցների հարաբերությունները և նրանց վերաբերմունքը նման փոխադարձ կապերի հանդեպ (կապեր/հակասություններ),
– մասնակիցների ենթակայության տակ գտնվող ռեսուրսները՝ սեփական օրակարգը իրականացնելու նպատակով (ռեսուրսներ),

– մասնակիցներ, որոնք փորձում են կարգավորել հակամարտությունները բանակցությունների միջոցով (անհրաժեշտ ռեսուրսներ):

3. **Հակամարտության դինամիկա**. Հակամարտության ուղղվածության, մասնակիցների և պատճառների միջև եղած փոխադարձ կապ:

4. **Հաշտության միջոցները.** Մասնակիցների միջև պոտենցիալ հաշտության նպատակով «սպոյլերների» կամ «շահագրգիռ խմբերի» (որոնք իրենց ավանդն են ներդրել հակամարտության կարծրացման գործում) գործունեության հիմնավոր վերլուծություն: Նման վերլուծություն անցկացնելու ժամանակ անհրաժեշտ է տեղեկատվության փաստաթղթավորում, դուք կստանաք հավելյալ տեղեկատվություն և կվարեք հարցազրույցներ, որպեսզի պարզվի, թե որքանով կատարյալ և օբյեկտիվ է ձեր վերլուծությունը: Գաղափարը կայանում է նրանում, որ սահմանվեն օբյեկտիվ պատճառներ, որոնք, հակամարտության կողմերը հնարավոր է ընդունեն որպես հաշտության ընդհանուր հիմք:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՓՈՒԼԵՐԸ

Հակամարտությունը լուսաբանող լրագրողի համար կարևոր է իմանալ հակամարտության փուլերը:

Հաղորդակցության տեսության պրոֆեսիոնալ, գիտնական Ֆրիդրիխ Գլասը[1] առանձնացնում է էսկալացիայի ինը փուլ: Երրորդ փուլը լրատվամիջոցների համար կարևոր փուլ է, քանի որ այն ենթադրում է հակամարտության երկու կողմերի միջև հաղորդակցության բացակայության լրացում: Հակամարտությունը լավ լուսաբանելու և անկողմնակալ տեղեկատվություն հաղորդելու արդյունքում, հնարավոր է հակամարտության երկու կողմերն էլ նախատեսեն միմյանց

[1] Friedrich Glasl: Konfliktmanagement, Vol. 2, Bern/Stuttgart, 2002, p. 216.

կարծիքները և այդպիսով կրճատվի հակամարտության հետագա էսկալացիայի հնարավորությունը:

1. **Կարծրացում.** Կարծիքները վերածվում են դիրքորոշումների: Կոնֆլիկտային իրավիճակներում ըմբռնումն ու դերերը համախմբված են: Չնայած դրա, երկու կողմն էլ կրկին հավատում է, որ թյուրիմացությունները հնարավոր է արմատախիլ անել բանավոր կերպով:
2. **Բևեռացում, բանավեճեր.** Դեռևս գոյություն ունեն ընդհանուր նպատակներ, սակայն նկատվում է անհատական շահի աճ: Ակնկալելի է, որ դիրքերի կուրուստը կարող է հանգեցնել անցանկալի արդյունքի: Յուրաքանչյուր կողմ ձգտում է հաստատել իր առավելությունը մեկ այլ կողմի հանդեպ: Ամրագրվում են վարքագծի կանոնները, որոնք ուղղակիորեն չեն վերաբերում հիմնախնդրին: Դեռևս գոյություն ունի կենդանի կապերը պահպանելու հետաքրքրություն, սակայն տակտիկական տեղաշարժը ավելանում է:
3. **Ոչ թե բառեր, այլ գործողություններ.** Ընդհանուր պատկերացումը կասկած չի առաջացնում, ուշադրություն է դաձվում նորմայից դուրս առկա հարցերի վրա: Մերժված է երկրորդ կողմի պատասխան տալու իրավունքը: Չի կայանում երկխոսություն: Նորմերը խախտող գործողությունները առաջացնում են պատասխան ռեակցիա:
4. **Արտահայտություններ և կոալիցիա.** Տատանվող վերաբերմունքը փոփոխվում է և կենտրոնանում հաղթանակի վրա, այլևս գոյություն չունի ընդդիմախոսի բացասական իմիջը կերտվում է ինչ-որ մեկի փառավոր դեմքը: Ինքնաբմբռնմանը հետևում են ընդդիմախոս կողմի արված քայլերը:
5. **Տեսակի կորուստ.** Սեփական դիրքերը հաստատելու նպատակով տեղի է ունենում երկրորդ կողմի հանրային զրպարտություն: Խմբերի միջև անհնարին է դառնում անմիջական կապ հաստատելու ցանկացած ձևը: Երկրորդ կողմի նկատմամբ զզվանքի զգացումը ակնհայտ է:

6. **Ռազմավարություն և սպառնալիք.** Հակամարտության կողմերը վերացրել են նահանջելու բոլոր ճանապարհները: Ավելանում են բռնի գործողություններ: Թշնամու գործողությունները համարում են ագրեսիվ, իսկ իրենց արարքները ներկայացնում են, որպես պատասխան ռեակցիա: Իռացիոնալ գործողությունների քանակը աճում է: Նպատակը՝ ընդդիմության և իրավիճակի բացարձակ վերահսկողությունն է:
7. **Սահմանափակ կործանարար հարվածներ.** Մտադրություն՝ սեփական գոյության անվտանգությունը ապահովելու նպատակով, թշնամու ոչնչացում կործանարար գործողություններով: Յուրաքանչյուր կողմ գտնում է, որ երկրորդ կողմը կարող է իրագործել նման գործողություններ և դրանից խուսափելու նպատակով, նրանց պետք է ոչնչացնել: Սեփական նպատակին պետք է հասնել ցանկացած գնով:
8. **Ֆրագմենտացում (հատվածականացում).** Կործանարար հարվածները հակառակորդին հատվածների բաժանելու, կյանքն իսպառ վերացնելու, կողմնակիցներից մեկուսացնելու նպատակով են արվում: Ագրեսիվ գործողությունները ավելանում են: Նպատակը՝ կոտրել հակառակորդին, վնաս չպատճառելով սեփական գոյությանը:
9. **Միասին անդունդի մեջ.** Կիրառվում է բռնության ցանկացած ձև, նույնիսկ այնպիսին, որը ինքնաոչնչացման վտանգ է ստեղծում: Գլխավոր նպատակը հակառակորդին ոչնչացնելն է:

Ինչպե՞ս է կարգավորվում հակամարտությունը

Լրագրողները պետք է վստահ լինեն, որ գոյություն ունեն հակամարտության դադարեցման մի շարք ճանապարհներ: Խորհեք հետևյալ երևակայական հակամարտության մասին՝ երկու խմբերի միջև նարնջի պատճառով ընթանում է հակամարտություն: Նարնջի ծառը աճում է խմբերից մեկի հողի վրա, սակայն նարնջի ծառի պտուղը կախված է մյուս խմբի հողի վրա: Երկու խումբն էլ ունեն նարնջի ցանկություն:

Գոյություն ունի այս հակամարտությունը կարգավորելու առնվազն չորս ճանապարհ:

1. **Մեկ կողմի առավելությամբ.**
   ա) Երկու խումբ բռնի կերպով հակադրվում են միմյանց և նարինջը հասնում է ուժեղին: Պարտվածը զայրացած է և ցանկանում է վրեժխնդիր լինել:
   բ) Դատավորը որոշում է կայացնում հոգուտ խմբերից մեկի, սակայն հնարավոր է, որ դատավորը լինի կաշառված: Պարտված կողմը դժգոհ է:
   գ) Փոխհատուցում. խմբերից մեկը վճարում է մյուսին և պահպանում նարինջը: Դա հնարավոր է թանկ արժենա:

2. **Նահանջ.**
   ա) Խմբերից մեկը կամ երկուսն էլ նահանջում են: Հակամարտությունը մնում է չլուծված, խմբերից ոչ մեկը բավարարված չէ:
   բ) Խմբերից մեկը ոչնչացնում է նարինջը կամ տալիս է մեկ ուրիշին: Նարնջի ոչնչացումը հնարավոր է ներառի բռնություն: Երկու կողմն է կորցնում են նարինջը:
   գ) Խմբերը չեն գործում: Նարիջը փթում է, այն կորած է երկու խմբի համար:

3. **Փոխզիջում: Առավել շահավետ ճանապարհ**
   ա) Կտրեք ծառը, երկու խումբն էլ կստանա ինչ-որ բաժին:
   բ) Կտրեք նարինջը, խմբերը նարնջի կտորները կվերցնեն մեկ առ մեկ: Այժմ նարինջը իրենից ներկայացնում է այնպիսի աղբյուր, որը հնարավոր է բաժանել: Միգուգե կատարելապես ոչ հավասար, բայց երկու խումբն էլ գոհ է:
   գ) Քամեք նարինջը: Դա նարինջի այլ ձևն է: Այժմ նարինջը իրենից ներկայացնում է այնպիսի աղբյուր, որն ունի այլ արժեքներ: Միգուգե կատարելապես ոչ հավասար, բայց երկու խումբն էլ գոհ է:

4. **Տրանսցենդենտություն (այնկողմնային):** Հակամարտության կարգավորման իրական ճանապարհ:

ա) Հրավիրեք մարդկանց, ովքեր հետաքրքրված են նարնջով: Խմբերը չունեն ամբողջ նարնջի համար պայքարելու իրավունք: Հակամարտությանը ներգրավված խմբերի հարևանությամբ ապրող մարդիկ կորոշեն, որ նարինջը հասարակական ռեսուրս է և երկու կողմին կոչ կանեն հակամարտությունը կարգավորել առանց բռնության:

բ) Ձեռք բերեք ևս մեկ նարինջ: Հասարակության անդամներից մեկը կամ հարևանը գնում է շուկա, գտնում է մեկին, ով ունի ավելորդ նարինջ և կարող է բաժանել այն երկու խմբերի միջև ու այդպիսով լուծում է հակամարտությունը:

գ) Երկու խումբը, հասարակության ազդեցության տակ, համաձայնվում է թխել նարնջի թխվածք, վաճառել շուկայում և բաժանել գումարը: Այժմ նարինջը այլ բնույթ է ստանում: Այն արդեն եկամտի աղբյուր է:

դ) Երկու խմբերը ցանում են նարնջի սերմը: Կառուցում են նարնջի պլանտացիա և միասին դառնում ավելի մեծ համայնքի համար նարնջի հաջողակ մատակարարող: Լավագույն ելք:

Դա չի նշանակում, որ հարևանները կարող են թափորով գնալ և թելադրել կողմերին, թե ինչպես վարվեն: Սակայն լսել և նախատեսել ավելի լայն հասարակության առաջարկը, հակամարտությունը կարգավորելու ժամանակ շատ կարևոր է:

Ո՞րն է այս վերլուծության նպատակը: Ակնհայտ է, որ հակամարտությանը պետք է դիտարկենք տարբեր կերպ.

– երբ հակամարտությունն ընկալում են, որպես աղբյուր, որը հնարավոր է բաժանել, ապա բռնի հակամարտությունը պակաս հավանական է,
– երբ հետաքրքրություն է դրսևորում ավելի մեծ համայնքը, ապա նրա նկատմամբ կարծրանում է ճնշումը, որպեսզի չկիրառվեն բռնի մեթոդներ,

- Երբ գոյություն ունի մի քանի այլընտրանքային ճանապարհ, բռնությունհազվադեպէկիրառվում:Որքանշատենայընտրանքները, այնքան ավելի քիչ են հակամարտությունները: Ավելի շատ այլընտրանքային ճանապարհ գտնելու նպատակով, ներգրավեք ավելի շատ մարդկանց: Դա տալիս է գաղափարներ կիսելու և հակամարտությունը այլ կերպ ընկալելու հնարավորություն: Երբ երկու կողմն էլ փակուղու մեջ է, ապա հասարակության մյուս անդամները՝ կրոնական առաջնորդները, գործարար հանրությունը, քաղաքացիական հասարակությունը, հարևան բարեկամական երկիրը կամ միջազգային կազմակերպությունները, ներկայացնում են տարբեր հայեցակետեր և հակամարտությունը կարգավորելու այլընտրանքային ուղիներ:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հակամարտությունն ինքնակամ չի ավարտվում: Անհամաձայնություններն ու հակամարտությունները վերջակետելու համար որոշակի միջոցների ձեռնարկում է հարկավոր: Որոշ հակամարտությունների կարգավորում երբեմն հնարավոր է երկխոսության և խաղաղ ճանապարհների միջոցով, իսկ այլ դեպքերում՝ էսկալացիան միևնույն է իրականացվում է և վերածվում զինված գործողության:

Հակամարտության կարգավորման ամենանպաստավոր միջոցներից մեկը հաղորդակցությունն է: Նրա համար, որպեսզի երկու կողմերը խաղաղ ճանապարհով ընդունեն իրենց որոշումները, անհրաժեշտ է երկխոսության կազմակերպում: Նմանօրինակ հաղորդակցության նպատակն է խաղաղ ճանապարհով կարգավորել վիճահարույց հարցն ու հակամարտությունը: Եվ հենց այստեղ է, որ ցայտուն է դառնում ժուռնալիստիկայի առաջատար դերը հակամարտության կարգավորման

հարցում: Լրագրողները պետք է մոռանան այն լարվածության մասին, որ առկա է եղել հին էլիտայի միջև: Նրանք պետք է պատրաստ լինեն այլ կողմեր ներգրավել և նոր կարծիքներ լսել: Հակամարտության ճշգրիտ լուսաբանումը, անկողմնակալ և ստույգ ինֆորմացիայի մատուցումը նպաստում են հակամատությունների նվազմանը:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իր հերթական աշխատանքն իրականացնելիս, լրատվամիջոցի ներկայացուցիչը պարտադիր պետք է գիտակցի, որ նա նպատակադրված կամ ակամայից է նպաստում հակամարտության չեզոքացմանը կամ ընդհակառակը, լարմանը: Հակամարտության ժամանակ լրատվամիջոցն առանձնահատուկ դեր է կատարում, հասցնելով նպատակը մինչև խաղաղ կարգավորում.

- Հակամարտությանը նախորդող փուլ. զանգվածային լրատվամիջոցները լուսաբանում են հակամարտող կողմերի մրցակցային շահերը, որոնք հնարավոր է առաջ բերեն հակամարտային իրավիճակ և դրանով իսկ ընդհանուր հիմք ու խաղաղ «պայքարի» պահանջ ստեղծեն՝ բանակցությունների միջոցով անհամաձայնությունը կարգավորելու համար:
- Հակամարտության ընթացիկ փուլ. այս ընթացքում լրատվամիջոցը կիրառում է մարդկային, տնտեսական, սոցիալական և քաղաքական ռեսուրսներ, որոնք առավել են հզորացնում խաղաղության անհրաժեշտությունը:
- Հետհակամարտային իրավիճակ. լրատվամիջոցը հետևողականություն է ցուցաբերում կողմերի միջև խաղաղ հաշտեցումը իրական դարձնելու գործընթացում և ապահովում դրա արդարացի իրագործումը:

Ներքևում նշված են հակամարտության կարգավորման տարրեր, որոնք հակամարտազգայուն լրագրողը պետք է հրամցնի կողմերին: Սա կօգնի նրանց որոշումներ կայացնելու հարցում:

1. **Հաղորդակցական տարածքի ստեղծում.** Լրատվամիջոցը հաղորդակցման ամենանշանակալի հարթակն է, որը հակամարտության ժամանակ հայտնվում է երկու կողմերի միջև: Երբեմն կողմերից մեկը լրատվամիջոցի միջոցով սպառնող հաղորդագրություններ է հղում մյուսին: Իսկ որոշ դեպքերում, կողմերը երկխոսում են լրագրողների միջոցով:
2. **Գիտելիքի փոխանցում.** Կողմերից յուրաքանչյուրը պետք է իմանա, թե ինչն է խանգարում կողմերին հաշտություն հաստատել: Ժուռնալիստիկան վեր է հանում յուրաքանչյուր կողմին հատուկ բարդությունները, բացահայտում, թե ինչպիսի՞ն է նրա քաղաքականությունը կամ դրդառիթները և դրանով նպաստում, որպեսզի մյուս կողմը լավ ուսումնասիրի առկա իրավիճակը, խուսափելու համար շուտափույթ և արագ որոշումներից:
3. **Վստահելիության ամրապնդում.** Վստահելիության պակասը հակամարտությունը գրգռող հիմնական գործոնն է: Սուր հարցերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ ու պարզաբանմամբ լրատվամիջոցը կարող է կասկածներ փարատել: Հաշտեցման այլևայլ օրինակների ներկայացմամբ լրատվամիջոցը կարող է նաև ցույց տալ, որ այդուհանդերձ հնարավոր է որոշումների կայացում:
4. **Թյուր ընբռնումների շտկում.** Լրատվամիջոցը ուսումնասիրում և լուսաբանում է երկու կողմի թյուր ըմբռնումները միմյանց վերաբերյալ: Դրանով նպաստում է, որպեսզի կողմերը վերանայեն իրենց տեսակետներն ու առավել ջանք ներդնեն հակամարտությանը վերջ դնելու համար:
5. **Կոչ դեպի հումանիզմ.** Երկրորդ կողմի առավել լավ ճանաչումը և հարգանքի դրսևորումը նշանակալի քայլ է: Այդ իսկ պատճառով բանակցող երկու կողմերին մեկ սենյակում են տեղավորում: Լավ ժուռնալիսիտիկան իրական մարդկանց է ընդգրկում սյուժե և ցույց տալիս, թե ինչ ներազդեցություն ունի այդ հարցը նրանց վրա:
6. **Հիմնական հետաքրքրությունների նույնականացում.** Հակամարտության ժամանակ պարտադիր է, որ կողմերից յուրաքանչյուրն իմանա մյուս կողմի կարևոր հետաքրքրությունները: Լավ լրագրողը

խիստ հարցեր է հղում և փորձում խորանալ առաջնորդների ասվածի իրական իմաստի մեջ: Նա նաև փորձում է բացահայտել առաջնորդների հետաքրքրությունների հետևում թաքնվող առավել մեծ խմբերի հետաքրքրությունները:

7. **Զգացմունքների դրսևորման միջոցներ.** Հակամարտությունների կարգավորման ժամանակ, յուրաքանչյուր կողմ պետք է ունենա դժգոհություն կամ զայրույթ արտահայտելու հնարավորություն: Հակառակ դեպքում, չափազանց լարվածությունը էմոցիոնալ պոռթկման նախապայման է դառնում և, հնարավոր է իրավիճակն առավել վատթարանա: Լրատվամիջոցը կարող է ելք գտնել և երկու կողմերին խոսելու հնարավորություն տալ: Հաճախ վեճը ավարտվում է ոչ թե փողոցային բախմամբ կամ ուժի կիրառմամբ, այլև կարգավորվում հենց լրատվամիջոցի օգնությամբ:
8. **Հակամարտության նորովի գիտակցում.** Խնդրի այլ տեսանկյունից լուսաբանումը հնարավոր է նվազեցնի լարվածությունը և խթան հանդիսանա բանակցությունների համար: Արհեստավարժ ժուռնալիստիկայում խմբագիրներն ու լրագրողները մշտապես փորձում են իրադարձությունն այլ տեսանկյունից դիտարկել, գտնել այլընտրանքային հայեցակետեր, նորովի գնահատել, որի արդյունքում նույն պատմությունը կարող է նորովի գրավել լսարանը: Նման ժուռնալիստիկան երկու կողմերին կոչ է անում նորովի վերանայել հակամարտությունը:
9. **Հեղինակության պահպանում, համաձայնության ձեռքբերում.** Երբ կողմերը փորձում են կարգավորել հակամարտությունը, նրանք պետք է փաստարկների միջոցով փարատեն իրենց կողմնակիցների վախը: Հնչածը լուսաբանելու շնորհիվ լրատվամիջոցը հնարավորություն է տալիս հակամարտության առաջնորդներին պահպանել սեփական հեղինակությունը և փոխհամաձայնության գալ, նույնիսկ եթե հարկ լինի դիմել հեռավոր շրջանների փախստականներին և գաղթականներին:
10. **Որոշումների կայացում.** Ի վերջո, հակամարտող կողմերից յուրաքանչյուրը, դժգոհություններին արձագանքելու համար,

ամեն օր հանդես է գալիս կոնկրետ առաջարկով: Հաջողված ռեպորտաժում կողմերին հարցեր են հղվում կոնկրետ որոշումների մասին և հնարավորություն չի տրվում անդրադառնալ պարզապես դժգոհությունների ռիտորիզմին: Արհեստավարժ ժուռնալիստիկան որոշումների որոնման անխափան ու շարունակական գործընթաց է:

11. **Իշխանության բալանսի խրախուսում.** Հակամարտությանը մասնակից խմբերը, հակառակ առկա անհավասարակշռության, պետք է հավատան, որ իրենց ևս ուշադրություն կհատկացվի, եթե բանակցելու նպատակով հանդիպեն հակառակ կողմին: Ճիշտ լրագրությունը ձեռնտու է բանակցողներին, քանի որ նման պարագայում ռեպորտաժը օբյեկտիվ և բալանսավորված լինելու հիմք է ունենում: Նման լրագրությունն ընդգրկում ու հավասար ուշադրություն է հատկացնում բոլոր կողմերին, նպաստում իշխանության հավասարակշռությանն այն առումով, որ լսում է բողոքներն ու լուծումները միաժամանակ:

ԽԱՂԱՂԱՐԱՐ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ[1] ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ժուռնալիստները պատասխանատու են այն մարդկանց համար, ում համար և ում մասին լուրեր են լուսաբանում: Որոշ լրագրողների կարծիքով, նրանք պատասխանատու չեն այն իրադարձությունների համար, որոնք հնարավոր է զարգանան վերջին լուրերի հաղորդումից հետո. «Մենք լուսաբանում ենք հակամարտություններն այնպես, ինչպես ֆուտբոլի խաղը, մենք պարզապես նկարագրում ենք իրադարձությունները»: Քանի որ լրագրողական հետաքննությունն ու հակամարտությունների լուսաբանումը գործին միջամտություն են ենթադրում, առաջ են բերում դիրքորոշումների տեղաշարժ, խաղաղ ժուռնալիստիկան պատասխանատվության առաջ է կանգնում:

Խաղաղ ժուռնալիստիկան այն գաղափարախոսությունն է, որը պատերազմների և հակամարտությունների լուսաբանման ժամանակ, գործում է հանուն և հօգուտ կարգավորման ու խաղաղության հաստատման: Այն հակամարտության պատճառները, հետևանքներն ու մոտիվացիան և դրանց ընդհանուր նկարագիրն ավելի լավ հասկանալու հնարավորություն է տալիս: Նման ժուռնալիստիկային հակառակվող մյուսը կարող է լինել լրագրողների կողմից հաղորդվող այնպիսի մեկնաբանությունը, որի հետևանքով հակամարտող կողմերի միջև առավել աճի լարվածությունն ու սրվի անհամաձայնությունը:

Լրագրողները ռոբոտներ, նեյտրալ ու երբեմն անկուսակցական անձինք չեն: Նրանք ևս ունեն իրենց արժեքները, սուբյեկտիվ կարծիքները, կիսում են իրենց երկրի, կրոնի ու էթնիկ խմբերի արժեքները: Հենց այդ պատճառով էլ, լրագրողն օբյեկտիվ է, երբ մի կողմ է դնում իր սեփական հայացքներն ու սուբյեկտիվությունը և աշխատում

---

[1] տերմինը և կոնցեպցիան ստեղծվել են 1970 թվականին, Յոհան Գալտունի (Նորվեգիայի խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրության հիմնադրի) կողմից: Յ. Գալտունն ուսումնասիրում էր խաղաղ ժուռնալիստիկայի և ինքնագիտակցության վրա հիմնված աշխատանքային կոնցեպցիան, այն ժուռնալիստների համար, որոնք զբաղված են պատերազմի և հակամարտությունների լուսաբանմամբ:

վստահելիության[1], անաչառության[2] և պատասխանատվության[3] սկզբունքներով:

---

[1] Ճշգրիտ ինֆորմացիայի ստացումն ամենահատկանշականն է: Հաղորդման ժամանակ ամեն ինչ պետք է ճշգրիտ ներկայացված լինի . անունները պետք է ճիշտ արտահայտված լինեն, փաստերն այնպես պետք է մատուցվեն, ինչպես տեղի են ունեցել իրականում, ասվածի իրական նշանակությունը պետք է ակնհայտ լինի, նախքան լուսաբանելը լրագրողը ապացույցներ ու ճշգրիտ փաստեր պետք է հայթայթի: Արհեստավարժ լրագրողը պետք է շտապի հայթայթել ինֆորմացիա, բայց նախևառաջ այս իրավունքը պետք է նվաճի: Մարդիկ չեն խոսում լրագրողների հետ, եթե վախենում են, որ լրագրողները ճշգրտորեն չեն ներկայացնի իրենց խոսքը և այնպես չեն նկարագրի իրադարձությունները, ինչպես դրանք իրականում տեղի են ունեցել:

[2] Անկողմնակալություն (բալանս). ժուռնալիստիկայի գրեթե յուրաքանչյուր ծածկագիր անկողմնակալություն է պարունակում: Արհեստավարժ լրագրողը հավասարակշռված ռեպորտաժի ստեղծմանն է ձգտում: Հավասարակշռությունը երկու կողմերի ներգրավում է ենթադրում: Հակամարտությունը միշտ երկու կողմ ունի: Քաղաքացիներին անհրաժեշտ է նրա իմացությունը, թե ինչ է ասում այս կամ այն կողմը և որքանով է դա առնչվում իրենց: Հավասարակշռությունը նույնքան կարևոր է, որքան վստահելիությունը: Ժողովուրդը չի վստահում լրագրողին, որը միայն մեկ կողմն է լուսաբանում: Կողմնակալություն նշանակում է, որ լրագրողը որևէ կուսակցության կամ շարժման ակտիվ առաջնորդ է: Հակամարտության ժամանակ անկողմնակալ ժուռնալիստիկան լրագրողին մեծ առավելություն է տալիս: Ժուռնալիստները, որոնք հակամարտության ժամանակ որևէ կողմնակալություն չեն ցուցաբերում, հարգանքի են արժանանում:

[3] Լրագրողները պատասխանատու են այն ժողովրդի առաջ, որի մասին լուսաբանում են և այն հասարակության առաջ, ում համար լուսաբանում են: Լրագրողները պատասխանատու են պաշտպանել իրենց աղբյուրը: Շատերը լրագրողին չեն մատուցի կարևոր ինֆորմացիա, եթե զգան, որ իրենց անունները հիշատակվելու են: Հակամարտազգայուն լրագրողը պատվով է հայթաթում ինֆորմացիան և այդով գործում օրենքի և էթիկայի սահմաններում:

Այդուհանդերձ, խաղաղության առաքյալ Յոհան Գալտունի կարծիքով, երբ հասարակության մեջ լուրջ վտանգ է ծագում, թարմ լուրեր հաղորդող լրատվամիջոցը, սովորական, այսպես կոչված, «նվաստ ճանապարհներ» է ընտրում՝ պատերազմի ընթացքը հաղորդելու համար, լուսաբանում է պատերազմը նախաձեռնող էլիտայի մասին, ֆիքսում հաղթանակել-պարտվելու արդյունքները, այնպես պարզունակ է դարձնում իրավիճակը, ասես, մասնակից կողմերը հանուն հաղթանակի պայքարում են մարզադաշտում:

Պատերազմի լուսաբանման ժամանակ իր մեծ ազդեցությունն ունի ռազմական ղեկավարը. վերջին լուրերը սովորաբար պատմում են նրա մասին, թե ո՞ր կողմն է հասել հաջողության, ո՞րն է հայտարարել կապիտուլյացոա, որքա՞ն է զոհերի թիվը, որի նկարագրման համար կիրառվում են մարդկային զոհ և նյութական վնաս տերմինները:

Գալտունը լրագրողներին այլընտրանքային ուղիներ է առաջարկում. խաղաղ ժուռնալիստիկայի «վեհ/բարձր ճանապարհ», որը կենտրոնացած է հակամարտության տրանսֆորմացիայի վրա. հետևեք ներքևում տրված աղյուսակին:

Գալտունի աղյուսակը ժուռնալիստիկայի ցածր ճանապարհ/բարձր ճանապարհի վերաբերյալ[1]:

պատերազմի/բռնության ժուռնալիստիկա	**խաղաղության/հակամարտազգայուն ժուռնալիստիկա**
I. պատերազմ/բռնություն կողնորոշմամբ	**I. խաղաղություն/հակամարտություն կողնորոշմամբ**
կենտրոնացում դեպի պատերազմի դաշտ, 2 կողմ՝ մեկ նպատակ (հաղթանակ), պատերազմ, կողմնորոշված դեպի «զրո արդյունք»	հետաքննում է հակամարտության ծագումը, x կողմերը, Y նպատակները, z հարցերը, կենտրոնացած է դեպի բոլորի շահ

[1] Track Two : Constructive Approaches to Community and Political Conflict, Volume 7, Issue 4, Dec 1998.

փակված տարածություն և ժամանակ, պատճառներն ու սկիզբը. «ո՞վ նետեց առաջին քարը»	բաց տարածություն և ժամանակ, ամենուր նպատակներ ու արդյունք /նաև պատմության մեջ, մշակույթի մեջ/
պատերազմի ընթացքը մութ և գաղտնի է	հակամարտության ընթացքը թափանցիկ է
«իմն է-քոնն է» ժուռնալիստիկա. «ձեր ձայնը մերն է» գաղափարախոսության քարոզում	ձայնը բոլոր կողմերին, աջակցություն, ըմբռնում
դիտարկում է «նրանց», քանի որ խնդիրը կենտրոնացած է դեպի հաղթանակ	դիտարկում է պատերազմը/ հակամարտությունը որպես խնդիր, կենտրոնացած է հակամարտության հանդեպ կրեատիվ մոտեցմամբ
«նրանց» ապահումանիզացում, առավել հզոր է, քան զենքը	բոլոր կողմերի հումանիզացիա, առավել հզոր ուժ ունի, քան զենքը
ռեակտիվ. սպասում է, որպեսզի ուժ կիրառվի, որպեսզի լուսաբանի	պրոակտիվ. կանխում, քան բռնության/պատերազմի սկիզբ
կենտրոնացած է դեպի տեսանելի արդյունքներ (զոհվածների և վիրավորների թվաքանակ, նյութական վնաս)	կենտրոնացած է դեպի բռնության անտեսանելի արդյունքներ (տրավմա և հեղինակության անկում_ ամբողջական/ մշակութային վնաս)
II. Կենտրոնացած՝ դեպի քարոզչություն	**II. Կենտրոնացած՝ դեպի ճշմարտություն**
լուսաբանում է «նրանց» սուտը	լուսաբանում է բոլոր կողմերի սուտը
օգնում է «մեր» սուտը թաքցնելու մեջ	բացում է բոլորի ստերի վարագույրը

III. Կենտրոնացած՝ դեպի էլիտա (վերնախավ)	**III. Կենտրոնացած՝ դեպի ժողովուրդ**
կենտրոնացած է «մեր» վշտի վրա, էլիտայի առաջատար այրերը նրանց կարծիքի արտահայտողն են	կենտրոնացած է դեպի բոլորի վիշտ՝ կանանց, տարեցների, երեխաների. արտահայտվելու հնարավորություն է տալիս նրանց, ում ձայնը հասանելի չէ
անվանում է «նրանց» մեղավորներ	մատնաշում է բոլոր մեղավորներին
կենտրոնացած է դեպի էլիտար խաղաղարարներ	կենտրոնացած է դեպի համաժողովրդական խաղաղարարներ
IV. Կենտրոնացած՝ դեպի հաղթանակ	**IV. Կենտրոնացած՝ դեպի որոշումներ**
խաղաղությունը = հաղթանակ + կրակի դադարեցում	խաղաղություն = ոչբռնություն + կրեատիվություն (ստեղծագործում)
թաքցնում է խաղաղասիրական նախաձեռնությունները, մինչև ‘ հաղթանակի հաստատում	առաջնային է դարձնում խաղաղասիրական նախաձեռնությունները, որպեսզի խուսափի պատերազմի շարունակությունից
կենտրոնացած է դեպի հաշտեցում, ինստիտուցիաներ, վերահսկվող հասարակություն	կենտրոնացած է դեպի կառույցներ, մշակույթ- խաղաղ հասարակություն
Արդյունքը. ուղղվում է դեպի այլ պատերազմ, վերադառնում՝ եթե «հին պատերազմը» նորից է ժայթքում	Արդյունք. ռեզոլյուցիա, վերակառուցում, հաշտեցում

ԽԱՂԱՂԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՆ ՈՒ ՀԱԿԱՄԱՐՏԱԶԳԱՅՈՒՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՆ

- Մի ներկայացրեք հակամարտությունը որպես բախում երկու կողմերի միջև, որը մեկ նպատակ է հետապնդում և տրամաբանորեն մեկ կողմի հաղթանակն ու մյուսի պարտությունը նշանակում: Սրա փոխարեն, զրուցեք հարվածի տակ ընկած և տուժած վաճառականների, բանվորների հետ, որոնք չունեն աշխատելու հնարավորություն, գյուղում ապրող փախստականների և այլ անձանց հետ, ովքեր կամենում են վերջ տալ բռնությանը: Ներառեք նրանց պատմությունները, հայացքները, և նպատակները: Սա կնպաստի լայն սպեկտրի արդյունքների համար առավել ընդգրկուն տարածք ապահովելու մեջ:
- Իրարից խստորեն մի բաժանեք «մենք» և «նրանք»-ը:
- Հակամարտության սահմանման ժամանակ, խուսափեք առաջնորդների արտահայտությունների կիրառումից: Լուսաբանեք սովորական մարդկանց տեսակետները, որոնք մեծամասնության համար ընդունելի իմաստ ունեն:
- Խուսափեք հակամարտությունը կապել բռնության հետ, որը կոնկրետ վայրում և կոնկրետ ժամանակում է իրականացվում: Սրա փոխարեն խոսեք փոխհարաբերությունների և արդյունքների մասին, որոնք կարող է ամենուր իրականացվեն՝ ներկա պահին և ապագայում:
- Խուսափեք բռնությունն ու բռնատիրական քաղաքականությունը գնահատել ըստ մակերեսային արդյունքների: Գտեք ճանապարհներ, որպեսզի ինֆորմացիան ներկայացնեք անտեսանելի արդյունքների հետ զուգակցելով: Օրինակ, ցանկացած վնասի և հոգեբանական տրավմայի ազդեցության հետևանքները:
- Խուսափեք լուսաբանել միայն այն ինչ տարբերակում է հակամարտող կողմերը: Հարցեր ուղղեք նրանց և վեր հանեք ընդհանուր տեսակետներ: Լուսաբանեք հետաքրքրություններն ու նպատակները, որոնք երկու կողմն էլ հնարավոր է կիսեն:

- Խուսափեք միայն մեկ կողմի վշտի և վախի լուսաբանումից: Բոլոր կողմերի վշտին մոտեցեք նույն կերպ և լուսաբանեք համարժեք:
- Խուսափեք օգտագործել այնպիսի բառեր, որոնք են՝ ողբերգություն, ոչնչացում, տերորիզմ, տկար, անօգնական և այլն, երբ լուսաբանում եք, թե ինչ է վերապրել կողմերից մեկը: Նման խոսքերի կիրառումը լրագրողին կանգնեցնում է միայն մեկ կողմում: Մի հարցրեք մարդկանց, ինչպես են նրանք իրենց զգում, հարցրեք, ինչպես են նրանք իրավիճակից ելք փնտրում և ի՞նչ են մտածում: Միգուցե՞ խնդրի կարգավորման ճանապարհ են առաջարկում:
- Խուսափեք մեղադրել նրա մեջ, թե «ո՞վ սկսեց առաջինը»: Սրա փոխարեն, փորձեք ճշտել, թե ինչպե՞ս ընթացան իրադարձությունները, որոնք ունեցան այն հետևանքները, որոնք կողմերից և ոչ մեկը չէր ակնկալում:
- Բռնությունը լուսաբանելիս խուսափեք նկարագրել «զարհուրելին»: Բռնությունն առավել ճիշտ ընկալելու համար, լուսաբանեք թե ինչ սահմանափակումներ, հիասթափություններ և վիրավորանքներ է կրել ժողովուրդը: Նկարագրեք ժողովրդի աղճատված կենսակերպը:
- Խուսափեք զգացմունքային ծանր բառերից: Քաղաքական սպանությունը (*Assassination)* պետության ղեկավարի սպանություն է միայն: Զանգվածային սպանդ-կոտորածը (Massacre)՝ անմեղ, անզեն քաղաքացիների սպանությունն է: Զինվորների և ոստիկանների սպանությունը չի կարող նկարագրվել «զանգվածային սպանդ-կոտորած» բառերով: Ցեղասպանությունը (*Genocide)* ողջ ազգի ոչնչացում է նշանակում: Մի մեղմացրեք ցավը, բայց զգուշորեն օգտագործեք նման բառեր:
- Խուսափեք հրեշացնել և պիտակներ փակցնել հետևյալ խոսքերի միջոցով. ահաբեկիչ, ծայրահեղական, ֆանատիկոս, ֆունդամենտալիստ: Բառերը հօգուտ կողմերից մեկի են խոսում և մյուս կողմի հետ բանակցումն անհնար դարձնում: Այնպես նկարագրեք մարդկանց, ինչպես իրենք իրենց են անվանում. նրանց բնութագիրը մատուցելիս պահպանեք ճշգրտություն:

- Խուսափեք այնպիսի ածականների օգտագործումից, ինչպիսիք են. հրեշավոր, սաստիկ, վայրենի, բարբարոսական: Սրա փոխարեն պետք է լուսաբանեք այն, ինչ գիտեք նման ոչ ադեկվատ գործելակերպի մասին. տվյալ գործողության նկարագրությունը փորձեք այլ մարդկանց խոսքով մատուցել, որքան հնարավոր է շատ ինֆորմացիա մատուցեք ինֆորմացիայի ճշգրտության վերաբերյալ:
- Խուսափեք կարծիքներն իբրև փաստ ներկայացնել: Եթե որևէ մեկը հայտարարությամբ է հանդես գալիս, նշեք նրա ով լինելը, որպեսզի ընդգծեք, որ սա միայն նրա կարծիքն է և ոչ՝ ձեր կողմից մեջբերվող փաստը:
- Խուսափեք միայն մեկ կողմի ներկայացուցիչների իրավունքների խախտման, հարձակման և ոչ համապատասխան վարքագծի լուսաբանումից: Թվարկեք բոլորին, ովքեր ոչ ադեկվատ են գործում. հակամարտության մասնակիցներին բոլոր մեղադրանքները հղեք համահավասար լրջությամբ:
- Մի սպասեք, որպեսզի մեկ կողմի առաջնորդները ձեզ ելք մատնանշեն: Վերանայեք բոլոր խաղաղ գաղափարները, որտեղից էլ նրանք սերեն: Մատուցեք այս գաղափարներն առաջնորդներին և, ապա լուսաբանեք նրանց պատասխանները:
- Խուսափեք ցանկացած գաղափարն իբրև փաստարկված ներկայացնելուց: Լսարանին կամ ընթերցողին ներկայացրեք ամեն ինչ, ինչ կասվի:
- Մի ողջունեք առաջնորդների կողմից ռազմական հաղթանակի կամ կրակի դադարի վերաբերյալ ամրագրված ստորագրությունը այնպես, կարծես այդ քայլը պարտադիր տանում է դեպի խաղաղություն: Փորձեք լուսաբանել այն հարցերը, որոնք դեռ չեն լուծված և, որոնք կարող են պարարտ հող դառնալ բռնության համար:
- Խուսափեք առաջնորդների կողմից ներկայացված «մեր կողմի» որոշման լուսաբանումից: Նկատի ունեցեք և ստուգեք խաղաղասիրական նախաձեռնությունները, որտեղից էլ նրանք սերեն:

- Մշտապես հարց հղեք ինքներդ ձեզ. կարևո՞ր են, արդյոք ռասայական, կրոնական և կաստաների հետ կապված հարցերը ձեր ռեպորտաժում: Եթե ոչ՝ ապա հանեք դրանք:
- Պարտադի՞ր է, արդյոք, տվյալ թարմ լուրը, բխու՞մ է այն հասարակական շահերից, ինչո՞վ է հետաքրքիր այն, միգուցե միայն նրանով, որ առնչվում է երկրորդ կողմին:
- Թեկուզ ճշգրիտ լինեն այդ փաստերը, կնպաստե՞ն, արդյոք բացասական վերաբերմունքի ձևավորմանը, հնարավո՞ր է արդյոք դրանք այլ տեսանկյունից փոխանցել:
- Լսելի՞ են արդյոք, ձեր ռեպորտաժում իրարամերժ կարծիքներ: Բավական կամ բալանսավորվա՞ծ են, արդյոք, շարքային մարդկանց և փորձագետների տարբերվող մոտեցումները:
- Կիրառել եք թե՞ ոչ վիրավորական բառեր և մեկնաբանություններ, որոնք հնարավոր է բացասական վերաբերմունք ձևավորեն: Որքանո՞վ են այս մեկնաբանությունները համարժեք այլ մեկնաբանություններին:
- Քրեական լուրերի լուսաբանման ժամանակ, մատնաշու՞մ եք, արդյոք, մեղավորի կամ զոհի ռասայական և մշակութային պատկանելությունը: Արդյո՞ք սրանք հանրային հետաքրքրության առարկա են և ինչու՞:

Մեր՝ լրագրողների համար, բառերը հզոր զենք են: Ինչպես նաև լուսանկարներն ու ձայները: Այս զենքերը կարող ենք համաձայնության հաստատմանը ծառայեցնել և ոչ՝ վախի սերմանմանն ու միֆերի ստեղծմանը:

ՀԱԿԱՄԱՐՏԱԶԳԱՅՈՒՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ավանդական լուսաբանում

Քաղաք, Լոյո - Լոյոյի քաղաքապետը դատապարտել է, երեկ, Լոյոյում Բուզուի ահաբեկիչների կողմից իրականացված նռնակների պայթյունը, որի ժամանակ տասը զբոսաշրջիկ է զոհվել: Վարչապետը նշել է, որ նա ստեղծել է հատուկ ջոկատ, որը հետաքննելու եւ ձերբակալելու է զանգվածային սպանդ-կոտորածին մասնակից հանցագործներին: Ոստիկանությունը հայտնում է, որ պայթյունը տեղի է ունեցել նրանից հետո, երբ Բուզու մահապարտների ջոկատի անդամները քաղաքի հրապարակում գտնվող ճամփորդական բյուրո մեծ նռնակ են ներբերել: «Նռնակը հավանաբար ճամպրուկում էր», - ասել է ոստիկանության գնդապետ Ջո Չատերբոքսը: Առավոտյան, Բուզուի ահաբեկիչ-պարտիզանական ճակատը հերքել է նռնակի ներբերումը: Սակայն պետական աղբյուրները հայտնում են, որ վկա են ականատեսներ, որոնք երեկ քաղաքի հրապարակում Բուզուի ճակատի առաջնորդ Տամ Գրեյին են տեսել: Նրանք կարծում են, որ հենց նա է համակարգել հարձակումը:

Հակամարտազգայուն լուսաբանում

Քաղաք, Լոյո - «Գաղտնիքներով լի պայթյունը, որն իրականացրել է Բուզուի անջատողականների խումբը, տասը զբոսաշրջիկի կյանք է խլել», - երեկ հայտարարել է Լոյոյի քաղաքապետը: Ոստիկանության քննիչները դեռևս շարունակում են հետախուզել քաղաքի ավերված հրապարակը, որտեղ պայթյունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ զբոսաշրջիկները ավտոբուսից ճամփորդական բյուրո են տեղափոխվել: Քաղաքապետը պայթյունի մեջ մեղադրում է Բուզուի ինքնահռչակ խմբակցությանը, որը գյուղերում պայքարում է տեղի իշխանական մարմինների դեմ և հանրապետական կառավարում պահանջում: Հեռախոսազրույցի ժամանակ Բուզուի խմբակցության առաջնորդը հերքել է պայթյունի հետ կապը և անվանել այն ողբերգություն: Նշենք, որ տուրիստական ավտոբուսը որոշ ժամանակ առաջ ժամանել էր Բաբատու հարևան երկրից, ուր քաղաքացիական պատերազմ է ընթանում...

Տեսնու՞մ եք, արդյոք, տարբերություն

Ավանդական լուսաբանում

- Թարմ լուրը լի է ոչ փաստարկված մեղադրանքներով: Այն իմաստավորվում է քաղաքապետի խոսքով: Ասում է, որ հարձակվողները ահաբեկիչներ էին Բուզուից: Որտե՞ղից գիտի:
- Օգտագործված է էմոցիոնալ բառապաշար. կոտորած-սպանդ, ահաբեկիչներ, մահապարտների ջոկատ:
- Առանց փաստարկման փոխանցում է ոստիկանության գնդապետի հայտարարությունը: Անանուն պետական ատյանները ասում են, որ անանուն մարդիկ տեսել են Բուզուի առաջնորդին և նրան են մեղադրում: Գոյություն չունի հաստատող փաստարկ:

Հակամարտազգայուն լուսաբանում

- Լուսաբանում է միայն այն, ինչը հայտնի է: Նռնակ, գաղտնիքներով լի բառերը զգուշորեն է կիրառում: Ասում է, որ քաղաքապետը հայտարարել է և մեղադրել անջատողականներին՝ Բուզուից:
- Նա հիշատակում է անջատողականներին այնպես, ինչպես իրենք իրենց են կոչում: Փնտրում է երկու կողմերի պարզաբանումներ և մեկնաբանություններ:
- Չի օգտագործում էմոցիոնալ այնպիսի բառեր, որոնք են. զանգվածային սպանդ-կոտորած: Չի լուսաբանում ոստիկանության սպեկուլյացիան, որը չի անվանում վկաների անուններ:
- Հնարավորությունների տարբերակներ է առաջարկում: Հնարավոր է նռնակը լիներ ավտոբուսում, որը մուտք է գործել այն երկրից, որտեղ առկա է հակամարտություն:

Ավանդական լուսաբանում

Քաղաք, Վուդ - Խաղաղ բանակցությունները, որոնք նպատակ էին հետապնդում Վանդերլանդի հակամարտության վերջակետում, «ջուրն ընկան» անցած երեկո, երբ վարդագույն շապիկավորների ցուցարարները ոստիկանության վրա կազմակերպած զանգվածային կոտորած-սպանդ

իրագործեցին, իննը ոստիկանի սպանեցին և, ապա մասնատեցին մարմինները: Տեղի ունեցածը ահասարսուռ հանցագործություն է լեռնային Վանդերլանդ գյուղում, ուր պարեկային ոստիկանության վրա հարձակվել են թնդանոթներով և ռեակտիվ նռնակներով: Վիրավոր է ևս վեց հոգի, ոչնչացված է երեք միավոր տրանսպորտային միջոց: Մարմինները դանակով մասնատվել են. զոհերից մեկին գլխատել են: Գտնում են, որ հարձակումը Վուդլենդի լեռների մոտ տեղակայված ազգային-ազատագրական բանակի ահաբեկիչների գործն է: Ազգային-ազատագրական բանակի լիդեր Ջոն Սիքսպեկը ասել է, որ իր ժողովուրդը հնարավոր է կրակել է «պաշտպանվելու նպատակով»...

Հակամարտազգայուն լուսաբանում

Քաղաք, Վուդ - Վանդերլանդի ողջ քաղաքական սպեկտրն իր վշտակցությունն է հայտնում պարեկային ոստիկանության ինն աշխատակիցների մահվան կապակցությամբ: Երկու հիմնական կուսակցությունները, որոնք ներկայացնում են երկրի փոքրամասնություն՝ «վարդագույն շապիկավորներին», բացառում են մեղադրանքն, ըստ որի Ազգային-ազատագրական բանակն է իրագործել հարձակումը: Ազգային-ազատագրական ջոկատի ղեկավարը հերքում է պարեկային ոստիկանության վրա հարձակումը և նշում, որ իր ժողովուրդը հնարավոր է կրակել է «ինքնապաշտպանության նպատակով»: Եվ սակայն, Վանդերլանդի կառավարությունը հայտարարել է, որ իրենք ոչ մի բան չեն արել, թնդանոթներով եւ ռեակտիվ նռնակներով հարձակումը հրահրելու համար, որի հետևանքով ինը ոստիկան է սպանվել և երեք բեռնատար մեքենա ոչնչացվել: Խոսնակը հավելել է, որ ինչպես երևում է դիակները, դանակով են մասնատվել և նրանցից մեկը գլխատվել է...

Տեսնու՞մ եք, արդյոք, տարբերություն

Ավանդական լուսաբանում

- Բացասական թարմ լուր է, բռնություն բովանդակող. այն չի փորձում այլ կողմերի վերլուծություն փնտրել: Վատթարագույնն ըստ նրա այն է, որ «խաղաղ բանակցությունները ջուրն են ընկել»:
- Կիրառում է էմոցիոնալ և ոչ ադեկվատ բառեր, զանգվածային սպանդ-կոտորած, ահասարսուռ. «մորթազերծ դիակներ«, ընդգծում է բռնությունը:
- Ավանդական լուսաբանումը կողմնապահություն է անում. իրադարձությունը նկարագրում է բանակի խոսնակի տեսանկյունից ելնելով: Նա ասում է, որ պարեկային ոստիկանության վրա հարձակվել են:

Հակամարտազգայուն լուսաբանում

- Լուսաբանված է ավելի շատ բան, քան միայն բռնությունը, ներկայացված է ժողովուրդը, որը դատապարտում է բռնությունը:
- Թարմ լուրերը բալանսավորված են. ազգային-ազատագրական բանակի ղեկավարը հերքում է, որ հարձակումն իրենք են իրականացրել, բայց միևնույն ժամանակ ասում, որ իր ժողովուրդը պայքարում էր:
- Երկրորդ կողմը հիշատակվում է այնպես, ինչպես ինքն իրեն է անվանում՝ ազգային-ազատագրական բանակ:
- Բռնությունը չի քողարկվում, տեղի չի ունենում նրա անտեսումը, բայց այն մատուցվում է, որպես հայտարարություն և ոչ՝ փաստ:

Ավանդական լուսաբանում

Քաղաք, Լոյո - Երեքշաբթի երեկոյան, քաղաքի էթնիկ խմբավորումների միջեւ տեղի ունեցած նոր պայքարը հանգեցրեց յոթ երիտասարդների մահվան եւ պահեստի փլուզման: Լոյոյի և Ապուի հակամարտող խմբավորումների միջև մոտ 20 րոպե տևողությամբ բախման ժամանակ, իրար են հաջորդել ավտոմատների կրակոցներն ու «Մոլոտով»

կոկտեյլը, որը ոստիկաններից մեկն անվանել է «էթնիկ կրակոց»: Ինչպես ասաց բնակիչներից մեկը, մի երիտասարդ, ով Ապուի բնակիչ է, գոռացել է. «Բոլորիդ կսպանենք» և ինքնագործ նռնակը Լոյոյի կողմ, դեպի երիտասարդներով լի մեքենան նետել: Ավտոմեքենան կանգնած է եղել պահեստից դուրս: Այն սպանել է երիտասարդ լոյոցու, ով կրակում էր պահեստի պատուհանից», - ասել է երկրորդ բնակիչը: Մարդիկ տեսել են, թե ինչպես են նռնակներ նետել Ապու խմբավորման մյուս անդամները պահեստի պատուհանների ուղղությամբ: Բռնկված հրդեհը փլուզել է շենքը: Մի քանի շաբաթվա ընթացքում երկու խմբավորումներ ներգրավված են եղել էթնիկ պատերազմում: Ոստիկանության պաշտոնական ներկայացուցիչներն ասում են ...

Հակամարտազգայուն լուսաբանում

Քաղաք, Լոյո **-** Երեքշաբթի գիշեր, քաղաքի կենտրոնում, թմրանյութերի անօրեն վաճառքը պատճառ է դարձել թմրավաճառների երկու խմբի միջև զինված բախման: Կրակոցների ժամանակ, որի հետևանքով յոթ մարդ է սպանվել, հակամարտող թմրավաճառների կողմից ներգրավված երիտասարդներ են մասնակցել, որոնք բնակիչների կարծիքով, փորձել են վերահսկել տարածքը: Սպանված չորս երիտասարդը Լոյոյի բնակիչներ են: Նրանք պահեստը վերահսկելու համար էին վարձակալված: Տեղի բնակիչների կարծիքով, պահեստը թմրանյութերի մատակարարման կենտրոն է հանդիսանում, նշել է արևմուտքի քաղաքացիական միության նախագահ Ջեյն Գրինը. «Այլ թմրավաճառներ, որոնք արևելյան կողմի վերասկումն էին փորձում, վարձակալել էին և հրացաններով զինել Ապուի բնակիչ գործազուրկ երիտասարդներին, - ասում է տիկին Բրաունը: - Ոստիկանությունը մերժում է թմրավաճառքի հետ պայքարում աջակցությունը, որի հետևանքով մեր փողոցը պայքարի դաշտի է վերածվել: Մեզ անհրաժեշտ է ոստիկանական բաժին, բուժհիմնարկներ հիմնելու ֆինանսներ»...

Տեսնու՞մ եք, արդյոք, տարբերություն

Ավանդական լուսաբանում

- Սկսվում է բռնության մանրամասներով և մեղադրում էթնիկ խմբերին: Ժողովրդի էթնիկ պատկանելությունը հաճախ է ընդգծված:
- Անանուն ոստիկանի տեսակետը ներկայացվում է որպես փաստ:
- Մատուցվում են բռնության մանրամասները, բայց չի բացահայտվում բռնությունը:
- Չի փորձում լուսաբանել այլոց հետաքրքրությունները և տեսակետները:

Հակամարտազգայուն լուսաբանում

- Չի շոշափում էթնիկ պատկանելությունը, քանի որ այս թեմայում ամենաէականը դա չէ:
- Ցույց է տալիս բռնությունը, բայցև բացահայտում, որ բռնության պատճառը թմրավաճառներն են:
- Ինֆորմացիա է հաղորդում էթնիկ պատկանելության մասին, բայցև ցույց տալիս, որ նրանք զոհի դերում են:
- Որոշումների հետ միասին, որոնում է այլ աղբյուրներ և ինֆորմացիա:
- Ցույց է տալիս, որ ոստիկանությունը չի կարող որոշում կայացնել:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ

Հակամարտություն լուսաբանող լրագրողը պետք է տիրապետի անվտանգության կանոններին և պաշտպանության նորմեր կիրառի:

- Ոչ մի լուր այնքանով կարևոր չէ, որքան մարդկային կյանքը:
- Եթե մտադիր եք հակամարտող գոտի թափանցել, ապա ապահովության համար նախապես գծրագրեք ձեր փախուստի ուղին:
- Կշռադատեք ռիսկը և որոշում ընդունեք, արժե՞, արդյոք այդ լրատվության համար ռիսկի գնալ:
- Ծանոթացեք առաջին օգնության կանոններին, հատկապես, արնահոսությունը կանխելուն վերաբերող:
- Մի կրեք զենք, մի ճանապարհորդեք զինված լրագրողի ուղեկցությամբ:
- Ներկայացրեք ձեր անձը, ուր հնարավոր լինի: Ձեր անձը ներկայացնելու ժամանակ, ընդգծեք, որ լրագրող եք: Մի ներկայացրեք ձեր անձն այլ կերպ:
- Եթե հավատարմագրված չեք որպես պատերազմը լուսաբանող լրագրող և ձեզանից չի պահանջվում հատուկ հագուստ կրել, ապա երբեք մի կրեք զինվորական կամ կիսազինվորական հագուստ:
- Լավ ճանաչեք այն նշանները, որոնք ցույց են տալիս, որ փոփոխական իրավիճակում, այլ կողմի իրավասության տակ եք հայտնվել:
- Եթե ճակատի երկու կողմում եք աշխատում, երբեք մի հաղորդեք ինֆորմացիա միայն մեկ կողմի մարտական գործողության մասին:
- Մի կրեք քարտեզներ, ուր տեղամասերն են մատնանշված: Հնարավոր է լրտեսի տպավորություն թողնեք:
- Եթե հայտնվեք այնտեղ, ուր վտանգ է ներկայացնում տեղի բնակչությունը, խաղաղվեք և բարեկամաբար վարվեք: Ձեզ հետ ծխախոտ կամ նման այլ առարկաներ կրեք և ժողովրդին առաջարկեք:
- Ապարանջան կրեք կամ մի նշան փակցրեք ձեր վրա, ուր մատնանշված լինի ձեր արյան խումբը:

- Պոտենցիալ վտանգավոր վայրերում աշխատելու ժամանակ հագեք այնպիսի կոշիկ, որը հնարավորություն կտա արագ վազել:
- Այնտեղ, ուր տեղի բնակիչներն են, ինչու Ֆ խաղաղ:
- Վախի առիթ իսկապես կա, սա նորմալ է, բայց խուճապի մի մատնվեք:
- Ապահովագրություն. վտանգավոր վայրերում աշխատելու ժամանակ ստուգեք թե, արդյոք, ադեկվատ է ապահովագրել ձեզ՝ ձեր վարձակալը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

A Guide for Professional Journalism in Conflict Zones, by Search for Common Ground, Jerusalem, 2014.

Bjorkdahl, A., Developing a Tool Box for Conflict Prevention, Report on the Krusenberg Seminar, SIDA, September, 2000.

Bush, K., A Measure of Peace: Peace and Conflict Impact Assessment of Development Projects in Conflict Zones, IDRC Working Paper No. 1, 1998.

Du Toit, Peter, Conflict Sensitive Reporting: A toolbox for journalists; Sol Plaatje Institute for Media Leadership, School of Journalism & Media Studies, Rhodes University, Grahamstown, 2012.

Gaigals, Cynthia: Conflict sensitive approaches to development practice, IDRC Report, 2000.

Galtung, Johann, Constructive Approaches to Community and Political Conflict _ High road, low road : charting the course for peace journalism, Track Two, Volume 7, Issue 4, Dec 1998.

Glasl, Friedrich, Konfliktmanagement, Vol. 2, Bern/Stuttgart, 2002.

Howard, Ross, Conflict sensitive journalism, International Media Support, Copenhagen, 2012.

Keeble, R. L., Tulloch, J. Zollmann, F., Peace Journalism War and Conflict Resolution, Peter Lang Publishing, 2010.

McGoldrick, A., Lynch, J., "Peace Journalism, What is it? How to do it?", Retrieved 10 Sept, 2017 https://www.transcend.org/tri/downloads/McGoldrick_Lynch_Peace-Journalism.pdf

Roth, C.; Barbero, Ch et. al., "Conflict sensitive approaches to development, humanitarian assistance and peace-building" by Africa Peace Forum, Center for Conflict Resolution, Consortium of Humanitarian Agencies, Forum on Early Warning and Early Response International Alert.

Tragedies & Journalists _ A guide for more effective coverage by Dart Center for Journalism & Trauma; Dart Center for Journalism & Trauma. Retrieved 21 Sept, 2017 https://dartcenter.org/sites/default/files/en_tnj_0.pdf

Youngblood, Steven, Peace Journalism Principles and Practice, Taylor & Frances, 2016.

ISBN 978-9941-27-681-1

Friedrich Naumann
STIFTUNG FÜR DIE FREIHEIT

IDEM
The Institute for Democracy, Media and Cultural Exchange e.V.

Auswärtiges Amt

Freiheit.org
fnfsc.fnst.org